

17656

18
uly
135

«Պօլեսարներ բոլոր երկիրների, միացե՛ք»



Հիմունք Խաղաղի

Ա. Պ. Եսայան

ԳՐԱԿԱՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԹԱԿԱՆ

ԳԻՆ 20 ՄԷՆԴ

ՓՐԱՎԻՏԵՆՍ

Ցպագ . ԵՐԻՏՐԱՍՏՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

891.99-82

Ա-86

1915

65.55.82
Ա-ՅԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ

Թի- 11—Հրատ. Ս. Դ. Հնչկեան Կոմսիոնարեան Աւերկայի Գործարար Յանտիմարի

13 APR 2011

ԱՐԵԱՆ ՀԱՄԱՅԻՆ

(ԳՐԱԿԱՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ)

ԳԻՆ 20 ՍԷՆԴ

ՓՐԱՎԻՏԵՆՍ

Տպագր. ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

1915

17556

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ողջո՞յն Ս. Դ. Հնչակեան ռազմիկներուն	Ե. Գրիգորեան
Մեծ զօրահաւաքի օրերին	Գրիգոր Եղիկեան
Հաւատաց, եւ սեսաւ	Սարգիս Մ. Ծոցիկեան
Կարմիր օրերու յիշատակներէս	Մամիկոն Վարժապետեան
Ազատութեան ճամբուն վրայ...	Սիրվարդ
Իզո՞ւր (ոսանաւոր)	Արշալիր Գ. Շաւկեան
Պայքարի ճամբէն	Ասով Կիւլեան
Մահաւերժ հայ պանդուխտ (ոսանաւոր)	Վահան Զուգասպեան
Դիմով մեմուռններ	Լեւոն Մարտիրոսեան
Արծիւն ու բանաստեղծը (բանաստծ.)	Արշակ Մահօտեան
Փոքրիկ Սարգիսեան բնակահարը (թարգմ.)	Փոյ Շեֆերճեան
Միևջեւ ե՞րբ աշայես (ոսանաւոր)	Յարութիւն Գրիգորեան
Գուրգէնը	Արշալիր Գ. Շաւկեան
Ի՞նչ կրնէ Ամերիկահայը	Բ. Ռոբէն
Կախաղանին տակ	Վահէ Մանուէլեան
Կանաւորի մը երգը	Յարութիւն Տէսեան

10731-Մ

Ո Ղ Ջ Ո Յ Ն
Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ՌԱԶՄԻԿՆԵՐՈՒՆ

Գրեց՝ ԵՂԻՍԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ողջո՞յն Ձեզ տառապանքի և արիւնի արգանդէն ծնող Անդրանիկ Յեղափոխական Կուսակցութեան անձնէր մարտիկներ, զաղափարի և պայքարի անվեհեր ընկերներ, որ այսօր խիզախ քայլերով կը յառաջանաք պատերազմի թատերաբեմին վրայ բռնապետութեան ժանդոտ շղթաներու տակ պրկուող Հայութեան վրէժը Ձեր սրտին՝ դարաւոր մեր թշնամիին՝ Թուրք բռնակալութեան կուրծքը մխելու Ձեր կապարը, որ չաղախած է մեր հերոս ընկերներու և հարիւր հազարաւոր անմեղ զոհերու անապակ արիւնով:

Սուրացէ՛ք արագաթռիչ արծւի նման Մասիսին ու Արարատին կողերուն վրայէն տառապող Հայութեան վերածնութեան նոր թւականը կերտելու տենչէն խենդեցած...

Ողջո՞յն Ձեզ բռնապետութեան գահի հիմերը վշրող և Հայուն Ազատագրութիւնը դարբնող անձնէր զինւորներ և թանկագին ընկերներ, որ այսօրայ Ձեր մղած նւիրական ու սրբազան կռիւով Հայութեան դարաւոր հատնումին ու հալածանքին վերջ պիտի տաք, հազարաւոր մայրերու և քոյրերու աղիողորմ և սրտածմլիկ ճիչերը խաղաղ պիտի վերացնէք:

Անվեհեր մարտիկներ՝, Ձեր այս պայքարը բռնապետութեան դէմ՝ հարիւր հազարաւոր զոհերու վրէժն է, որուն արձագանգը այսօր աւելի ուժգնօրէն կը հնչէ Հայաստանի խորերէն:

Ողջո՞յն Ձեզ Իրաւունքի և Արդարութեան դատի պաշտպան ախոյեաններ և յեղափոխական ընկերներ՝, որ Արդարութեան, Իրաւունքի և Ազատագրութեան ծարաւի Հայութեան սրտին մէջ քառորդ դարէ ի վեր Ձեր մղած անհաւասար և հերոսական կռիւով Ազատութեան սերմերը ցանեցիք: Երէկի ստրկութեան մէջ ապրող և ազատութեան անձնէր զինւորները խաչող Հայ ժողովուրդը այսօր ըմբռնած ու հաշտուած է Ձեր զաղափարին ու որդեգրած ուղիին հետ, թէ առանց ա-

բիւնի ազատութիւն ձեռք չի բերիր: Այսօր հանուր Հայութիւնը Ձեր կողքին՝ ազատութեան երգը կը հնչեցնէ ու մեր դարաւոր թշնամիին մահաւան ողբը կը հիւսէ...

Ողջո՛յն Ձեզ հայրենիքի ազատութեան և ինքնավար Հայաստանի ռահվիրաներ, որ այսօր գոտեպնդւած հաւատքով կը յառաջանաք միշտ յառաջ, հաւատալով որ Ձեր իտիալը, ինքնավար Հայաստանի զաղափարը, այսօր ամբողջ Հայութեան իտիալը դարձած է: Այո՛, երէկի այդ իտիալը յիստողները այսօր զայն իրենց մենաշնորհը դարձնել կուզեն: Հպարտ եղէ՛ք ու մղեցէ՛ք կռիւ այդ իտիալովը ընդգրկւած, քաղեցէ՛ք յառաջ երէկի մեր բռնապետներուն գլուխը ճղմելու, որոնք մեր հերոս ընկերներու անապակ արիւնովը արբեցան շնականօրէն իրենց մեծ վարպետին՝ Ապտիւլ Համիտի հետ գրկախառնւած...

Ողջո՛յն Ձեզ երէկի հերոսներուն արժանաւոր յաջորդները, որ այսօր Ձեր հերոսական պայքարի ոգին կապրեցնէք ազատութեան տենչացող բոլոր սրտերուն մէջ: Յառաջ, միշտ յառաջ՝ երգեցէ՛ք հպարտ գիտակցութիւնով, վասնզի Ատլանտեանի այս ափին վրայ թառող Ձեր ընկերներն իսկ՝ գիտակից իրենց կոչումին ու զաղափարին՝ եկան ու դեռ պիտի գան Ձեր կողքին կռիւ մղելու բարբարոսութեան դէմ և Ազատութեան Դրօշը հաստատելու բռնակալի գահին վրայ:

Ազատութեան երգը հնչեցուցէ՛ք մարտազաշտին վրայ, որ Հայաստանի սարերը արձագանգեն. սոխակը պուրակներու մէջ թող զայն կրկնէ: Մասեաց աղանին Ազատութեան աւետիսը թող տանէ Տաճկահայերուն, որովհետեւ Ձեր շարքերը օրէ օր պիտի խտանան նորա նոր կամաւոր ընկերներով՝ Հոյ Ազատագրութեան Նահակիրն ըլլալու Արարատի ձիւնապատ կողերուն վրայ:

Ողջո՛յն Ձեզ անձնութեան ընկերներ, որ բռնապետութեան հիմերը քանդելով՝ փոքր ազգերու գոյութեան իրաւունքը կերաշխաւորէք: Բայց այս պայքարը կենաց և մահու պայքար է, պայքարներու է՛ն սոսկալին, վասնզի Ձեզնէ շատերը պիտի իյնան ռազմազաշտին վրայ դեռ Ազատութեան արշալոյսը չողջունած: Հոգ չէ, հերիք է որ ազատութեան ճամբուն վրայ կիյնաք դուք, ինչպէս ինկան Ձեր զաղափարակից անմահ ընկերները գոհունակութեան ժպիտը իրենց գէմքերուն և ազատութեան երգը իրենց շրթներուն վրայ անբաժան:

... Ու վաղը, ո՛վ գիւցալներ ազատութեան, երբ մեր դարաւոր թշնամին ջախջախի, ու մեր անվերջ ցաւերուն կոտորանքները լռեն, նախորդ ջարդերու վազորգային տիրող մեռելային լռութեան վերջ տրւի, և երբ Հայուն Ազատագրութիւնը հնչեցնէ «ՀնՁԱկ»ը, այն ատեն, ո՛վ նահատակուող հերոս ընկերներ, Ձեր հոգին վե՛ր բարձունքներու մէջ, ամպերու զէնիթը պիտի խայտայ. ու Ձեր հողակոյտին վրայ պիտի ծլին Ազատութիւնը խորհրդանշող վարդերը, որոնցմով Հայ կոտանք ծաղկեպսակներ պիտի հիւսեն ազատութեան նորագոյն հերոսներու ճակատները զարդարելու:

Ողջո՛յն Ձեզ Հայ Ազատագրութեան ռահվիրաներ:

Ողջո՛յն Ձեզ Ս. Դ. Հնչակեան Ամերիկայի բոլոր ընկերներէն:

ՄԵԾ ԶՕՐԱՀԱՒԱՔԻ ՕՐԵՐԻՆ

(ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ)

Գրեց՝ ԳՐԻԳՈՐ ԵՂԻՆԵԱՆ

Պատերազմը յայտարարել է՝ կատարել է մեծագոյն ոճիրը: Նրան պէտք է, որ հետեւեն նորանոր ոճիրներ, մեծ, փոքր, ահագին, անկող, մեղմ, անկատարի, ոճիրներ, որոնք պիտի սոսկում առաջացնեն մարդկանց մէջ, ոճիրներ, որոնք հիացում պիտի պատճառեն մարդկանց:

Չպէտք է պատերազմ յայտարարել, դա խելագարութիւն, ոճիրների գերագոյնն է, ասում է իւրաքանչիւր զինուորական, բայց երբ արդէն պատերազմը յայտարարւած է, պէտք է շատ-շատ մարդ կոտորել, պէտք է գետերն ու ծովերը ներկել արիւնով, պէտք է ղիակների կոյտերից պատնէշներ ու կամուրջներ կազմել, շարունակում է իւրաքանչիւր զինուորական իր նախկին խօսքերին որպէս հետեւութիւն:

Պատերազմը մի այնպիսի բռնութիւն է, որ նրա երեւուց յետոյ ուրիշ բռնութեանց մասին խօսել, նշանակում է լինել աշխարհի երեսում գոհացող մարդկանցից ամենամիափառը: Եւ եթէ այդ բռնութիւնը կայ, յայտարարւած է, պէտք է տանել ամեն զոհողութիւն նրան զիմագրւելու, նրան ոչնչացնելու համար: Որքան շուտ ընկնի այդ բռնութիւնը, այնքան շուտ երեւան կգան նրան հետեւող փոքրիկ բռնութիւնները: Եւ չէ՞ որ փոքրիկ բռնութիւնները աւելի շուտ են խորտակւում քան մեծերը:

Պատերազմը մի սարսափ է, մի կոշմար, մի ահարկու երազ, ո՛չ, մի ահարկու իրականութիւն: Այդ սարսափը, այդ կոշմարը, այդ իրականութիւնը մեզ յաճախ շատ հաճելի են երևում և մենք ամենամեծ հաճոյքով անձնատուր ենք լինում նրանց, յուսալով նրանց միջոցով ոչնչացնել աւելի փոքրիկ սարսափները, կոշմարները, պակաս ահարկու իրականութիւնները:

Կան մարդիկ, որոնք հաւատացնում են, թէ առանց պատերազմների մարդկութիւնը երջանիկ լինել, նորմալ կեանք վարել չի կարող: Այդ դէպքում պատերազմները ներկայանում են ռմի մի բարիք՝ մարդկութեան համար: Արգահատել են

այդ մարդիկ կամ կեղծաւորներ, որոնք միմիայն զգւանք կարող են յարուցանել մարդկանց մէջ:

Կան շատերն էլ, որոնք հաստատում են, թէ պատերազմները բնական հետեւանքներն են մարդկութեան կեանքում գոյութիւն ունեցող անհաւասարութեանց, բռնութեանց, մրցութիւններին, պայքարին: Այդ դէպքում պատերազմները ներկայանում են «միջոցներ» փոխելու մարդկութեան մէջ գոյութիւն ունեցող շատ հասկացողութիւններ, շատ կարգեր, շատ ձգտումներ: Նրանք նոր հասարակարգ են ստեղծում: Այսպէս մտածող մարդիկ խի՛ղք մարդիկ են, բայց ցանկալի էր, որ այդ մարդիկը աւելի լաւ բաներ ասելու ընդունակ լինէին:

Պատերազմների մասին ես միայն մի բան ունեմ ասելու: Ինձ չի հետաքրքրում այս բոլորիս, թէ նրանք ինչո՞ւ են ծնում ու զարգանում, նոյնպէս ես չեմ հետաքրքրւում, թէ նրանց մղողները ի՞նչ օգուտներ պիտի ստանան, կամ ո՞րքան իրաւունք ունեն այդ օգուտները ստանալու կամ նոյնիսկ որքան իրաւունք ունեն պատերազմելու համար: Ինձ հետաքրքրում է հոգեկան երեւոյթը: Պատերազմները ծառայում են որպէս փաստեր հաստատելու, որ մարդիկ ոչնչով չեն փոխել վայրի գաղաններից և ոչնչով չեն առաջադիմել նախապատմական շրջաններում ապրող իրենց նախահայրերից:

Ի հարկէ՝ մարդիկ պատերազմի ժամանակ իրենց գործ դրած գաղանութիւնների մէջ տեսնում են ինչ որ գրաւչութիւն, ինչ որ կատարելութիւն, անձն իրութիւն, մեծութիւն, հերոսութիւն, և զբա համար էլ նրանք յափշտակւում են անէանայու չափ, ոգևորւում են ինքնամոռացութեան չափ: Դա ծափահարելի է: Բայց մի՞թէ նոյնպիսի էքստազի մէջ վագրը չի պատառտում իր զոհերին, բորենին չի ծածում տաք արիւնը իր որսի:

Պատերազմը առանց զօրահաւաքի չի լինում: Պէտք է բազմաթիւ մարմիններ գումարել իրար մօտ թնդանօթի բերանը

տալու համար: Զորահաւաքները միշտ ունեն իրենց հետաքրքիր կողմերը: Ինչեք, ի՞նչ պատկերներ չեն բացում մեր առաջ զորահաւաքի օրերին, հիանալի, գեղեցիկ, սրտաճմլիկ, տխուր: Այդ օրերին մեզ շատ բան են ասում ամեն մի հայեացք, ամեն մի շարժում, ամեն մի բառ:

**

Մեծ զորահաւաքի օրերին:

Գտնւում էի երկաթուղու կայարանում, արդիւնաբերական մի մեծ քաղաքում, ուր զէնքի տակ էին կանչւում բանւորները, որոնք զէնքի տակ հաւաքելիս իրենց յետեւից թողնում էին բաղձնեւորի մի մեծ բազմութիւն, թողնում էին նրանց բաղձի բերմունքին և ճակատագրի քմահաճոյքին մատնւած: Չէ՞, որ նրանք իրենց ընտանիքին և երեխաներին ապրելու միջոց են տալիս միմիայն իրենց ձեռքի աշխատանքով:

Կայարանում և նրան չըջապատող փողոցներում ահագին բազմութիւն կար հաւաքւած: Չէնքի տակ կանչւածներին ճանապարհելու էին եկել իրենց ընտանիքի անդամները, իրենց ազգականները, ընկերները և, իհարկէ, թամաշայիներ, հանգիստեաններ, որոնք միշտ անհոգ, անտարբեր սիրում են հաւաքւել միշտ այնտեղ, ուր բազմութիւն կայ և զւարճանում են այդ բազմութեան շարժումը գիտելով կամ ուրիշ շարժման մասնակցելով:

Սրտաճմլիկ էր տեսարանը:

Ումանք լացում էին լուռ, անձայն, ումանք հեկեկում էին բարձր ձայնով, շատերը իրար էին զրկել և չէին կամենում բաժանւել, երեխաները իրենց ծնողների փէշերից էին բռնել և չէին բաց թողնում: Լսւում էին բարի երթ մաղթող խօսքեր: Գոռում էին հուրբաներ: Երգում էին: Դրօշակներ էին պարզել:

Տեսարանը ո՛չ միայն սրտաճմլիկ էր, այլ և՛ գեղեցիկ:

Խոստումներ, ոգևորութիւններ, երազներ:

Նայում էի շուրջս և չէի կարողանում անտարբեր լինել: Յուզւած էի: Նոյն իսկ աչքերս արտասուկալիւ էին:

Տրւեց երրորդ զանգը: Գնացքը պիտի շարժէր, բայց ճանապարհելու եկող բազմութիւնը դեռ չէր հեռանում կայարանից, ուրիշիսկ գտնւում էր գնացքի առաջ:

Ոստիկանները և սպաները, որ մինչ այդ ներկայանում էին ժողովրդի որդիները, բազմութեան անդամները, ցոյց առնողներ, հուրբա՝ գոռացողներ, ճանապարհողների ընկերակիցներ, յանկարծ դարձան օրէնքը գործադրողներ: Հրամայեց բազմութեանը յետ մղել, նոյնիսկ պլատֆորմի վրայից հեռացնել: Հրամայեց զինւորներին թափել վազօնների մէջ և իրարից բաժանել հարազատներին: Հրամայեց ուրիշիսկ ոյժ գործ դնել:

Ոստիկանութիւնը միշտ ոստիկանութիւն է, հանդիսաւոր օրերին էլ, սովորական ժամանակ էլ: Նա հանդիսատես լինելուց միշտ դադարում է, երբ պէտք է հանդիսատեսների վրայ ոյժ գործ դնել: Նա ընդունակ չէ հիանալ, ո՛չ էլ յուզւել: Նա մի մեքենայ է, որ հրաշալի է գործում միշտ, ամեն տեղ: Նա լացել չգիտէ, ինչպէս և՛ չի կարող ուրախանալ:

Ոստիկանութիւնը սկսեց ոյժ գործ դնել: Ի՞մ առաջ կանգնած էր մի զոյգ, ամուսիններ, ըստ երևոյթին: Տղամարդը մի հսկայ, ջղային, նիհար, մկանուտ, կիներ՝ մի հակապատկեր նրան՝ կարճ, նուրբ, վտիտ: Արտասուքը հոսում է երկուսի աչքերից, նրանց չըթնելով իրարից չէին հեռանում, նրանք ամուր գրկած են իրար: Ո՛չ մի բառ, ո՛չ մի խօսք: Բայց նրանք իրար շատ բան են ասում, անվերջանալիօրէն շատ բան:

Գնացքը շարժւում է, բայց նրանք չեն բաժանւում իրարից: Վերջին անգամ գուցէ նրանք գրկում են իրար, գուցէ այլ ևս չի վերադառնալ հսկայ տղամարդը, գուցէ այլանդակւած կգայ մի օր: Ինչպէս բաց թողնի նրան կինը:

Մօտենում է ոստիկանը, առաջարկում է բաժանւել միմեանցից: Նրանք ամուր գրկած են դեռ իրար: Ոստիկանը բռնում է տղամարդու թևը, բայց ոյժ չունի նրան բաժանելու: Նա կանգնում է և խնդրում շտապել: Նրանք այդ ժամանակ ոչ ոքին չեն լսում ու տեսնում: Նրանց համար ո՛չ միայն ոստիկանը, այլ և՛ իրանց չըջապատող բազմութիւնը չկար, չկար գնացքը, զորահաւաքը, պատերազմը, այլ կար մի ուժեղ միութիւն երկուսի հոգիներում, մի ուժեղ հոգեկան դրամա, մի ֆիզիքական հսկայ ճնշում:

Մօտենում է ոստիկանական մի սպայ:

Հրամայում է՝ շտապել: Նրան լսող չկայ: Նա կրկին է հրամայում, և, երբ այս անգամ էլ իր հրամանը անգործադրելի է մընում զինւորացուի կողմից, նա հրամայում է մի ոստիկանի էլ, որ իր ընկերով օգնի ուժով երկու իրար սիրող սրտերը միմեանցից պոկելու համար: Մինչև այսօր ոչ ոք չի կարողացել դեռ բռնի ուժը իրան խոնարհեցնել: Ամենաբանաստեղծական թրուխը թուլանում և գետին է թաւալւում, երբ բռնի ուժին է պատահում:

Բռնի ուժը ամուսիններին բաժանում է միմեանցից, տղամարդուն մղում է դէպի վազօնը, իսկ կնոջը յետ, յետ, դէպի փողոց:

— Հայրենասիրական զգացումներով պիտի տարւի իւրաքանչիւր քաղաքացի կին թէ տղամարդ, ասում է բարձր ձայնով ոստիկանական սպան, իսկ այդ կինը իր եսը բարձր է դասում հայրենիքից և չի կամենում իր ամուսնուց բաժանւել: Ստո՛ր, դաւաճա՛ն:

Ծափահարում են հայրենասէր սպային: Հուրբա՛, կեցցէ՛ հայրենիքը, կեցցէ՛ թագաւորը: կեցցէ՛ պատերազմը:

«Ստոր ու դաւաճան» կինը ստորացած յետ է քաշւում, կուչ գալիս, փոքրանում: Հուրբաները կրկնում են: Ոստիկանական սպան գլուխը բարձր, ծրպտուն, մօտենում է դահլիճի դրան: Փոքրիկ կինը կտրում է նրա առաջ և հաղիւսելի ձայնով ասում.

— Իսկ ո՞վ անունդ կը մատակարարի ինձ ու իմ երեխաներին, պ. ոստիկանապետ: Տարէ՛ք իմ ամուսնուն, տարէ՛ք ինձ էլ նրա հետ, չեմ կամենում տեսնել սովից կոտորւելու կոչւած իմ փոքրիկներին:

Սպան ժպտում է և սրամիտ մի բառ ասողի գիտակցութեամբ բարձրաձայն վըրայ բերում:

— Տիկին, դուք գեղեցիկ էք, միշտ մարդիկ կը գտնեն ձեզ վճարող, վստահելէ՛ք, որ սրանից յետոյ աւելի լաւ կապրէք:

Փոքրիկ կինը կարմրում է, դողում, ընկրկում է մի բայ, բայց նա չի կարողանում երկար տանել իրեն հասցրւած վիրաւորանքը: Եւ նա մեծանում է, հսկայ է դառնում և չրա՛խ, մի ապտակ գլուխը բարձր բռնած սպայի մաքուր ածելւած երեսին:

— Ստո՛ր, սրիկա՛յ, բղաւում է կինը բարձրաձայն, դրանով է՛ք մեզ մխիթարում, մեզ, որոնց ամուսինները գնում են կուրծք տալու թշնամու գնդակներին ձեր անբախտութիւնը աւելի ամուր պահելու համար, մեզ, որոնց երեխաները կոչւած են սպանւելու ձեր երեխաներին ապահով կեանք տալու համար, հա՛, դրանով է՛ք մեզ մխիթարում:

Բազմութիւնը կատաղում է, գրո՛հ է տալիս դէպի սպան, որ ընկնում է գետին՝ հաստ փայտի մի ուժեղ հարւածի տակ:

Ծափահարում են պատուաւէր կնոջը: Հուրբա՛, կեցցէ՛ հայրենիքը, կեցցէ՛ թագաւորը: կեցցէ՛ պատերազմը:

**

Նաւամատոյցի վրայ եմ: Զինւորներին տանող նաւը արդէն վերցնում է իր խարիսխը: Բազմութիւնը վխտում է, իրար հրում են մարդիկ, կանայք, երեխաները: Գնացողները բազմութիւ են: Բազմութիւ են և՛ ճանապարհողները, նոյն տեսարանները, ինչ որ երկաթուղու կայարանում: Հոյակապ է, գեղեցիկ է, սրբաւոր է և տխուր:

Նաւը շարժւում է: Կամրջակի վրայ կանգնած մի զինւոր նայում է նաւամատոյցի ծայրին գտնւող մի կնոջ: Զինւորը տարիքով է, միջահասակ, գեր, կինը նոյնպէս տարիքով է, միջահասակ, գեր: Երկար նայում էին նրանք իրար, այժմ էլ են նայում: Նրանք չեն արտասուում, չեն խօսում, այլ նայում են իրար երկար, երկար: Նաւը շարժւում է և դարձեալ նրանք նայում են իրար:

Անձրեք թափւում է հեղեղի նման, բայց բազմութիւնը տեղից չի շարժւում: Նաւը շարժւել է, բազմութիւնը դարձեալ տեղից չի շարժւում: Թաշկինակներ, զրկարկներ, թևեր են շարժւում նաւի և նաւամատոյցի վրայ: Ազմուկ, աղաղակ, լաց, կոծ, երգեր, հուրբաներ: Անձրեք ո՛չ մի ազդեցութիւն չի անում: Ոչ ոք թրջւելուց չի վախենում: Նոյն իսկ հանդիսատեսները գնալու, հեռանալու տրամադրութիւն չեն ցոյց տալիս:

Նաւը հեռանում է նաւամատոյցից մի քանի քայլ և ուղղում է քիթը:

— Հուրբա՛, բղաւում են նաւի և նա-

ւամատոյցի վրայ գտնուողները, կեցցէ՛ հայրենիքը, կեցցէ՛ բանակը, կեցցէ՛ թագաւորը, հուրըրա՛ :

Աղաղակները հետզհետէ խտանում են, ուժեղանում :

Հուրըրա՛ է գոռում նաև նաւի կամրջակի վրայ գտնուող և նաւամատոյցի ծայրին կանգնած կնոջ նայող զինուորը, ինչպէս և՛ հուրըրա է գոռում նոյն կինը, թէ և երկուսն էլ շարունակում են իրար նայել : կնոջ աչքերը արտասուկալում են, նա թաշկինակը մօտեցնում է աչքերին : Զինուորը աչքն է սրբում իր թևով :

Նաւը ուղղեց քիթը և շարժեց առաջ :

Բաղմուծիւնը խռնում է դէպի նաւամատոյցի ծայրը : Դարձեալ հուրըրաներ, դարձեալ կեցցէներ : Անձրեւը շարունակում է :

Յանկարծ բաղմուծիւնը յետ է նահանջում : Նաւամատոյցի ծայրին գտնուող կինը իրան զցում է ծովը, ճիշտ հեռացող նաւի ալիքների տակ : Նա ընկղմում է : Սարսափ, երկիւղ, դժգոհութիւն : Նոյն կնոջ նայող զինուորը փորձում է կամրջակից իրան ցած գցել : Բռնում են նրան :

Նաւը կանգնում է : Մօտենում է նաւամատոյցին : կնոջ մարմինն են փնտռում : Նա երևում է վերջապէս բայց արդէն անշնչացած :

Նաւի զինուորը նայում է դիակին, բայց նաւից դուրս գալ չի կարող : Նա գոռում է, ոռնում գերագոյն վշտից, լեցւում է ներկաների աչքերը :

Յուզում, ճնշում, տանջանք :

Նաւը շարժւում է : Իր գերագոյն վըշտի մէջ զինուորը ասում է միայն .

— Իսկ ո՞վ կը պահի մեր երեխային, նա բոլորովին անտէր մնաց :

Նաւը ուղղում է քիթը :

Բաղմուծիւնը ոչինչ չի ասում նրան հանգստացնելու համար :

Նիհար, կմախքացած, աղքատ հագած, գլուխը սև շալով ծածկած մի կին ճանապարհ է բացում դէպի նաւը և գոռում իր բոլոր ուժով .

— Գնա՛ խաղաղ պրտով, եղբայր, չորս երեխաներ ունեմ, քո երեխան կը լինի հինգերորդը, և եթէ ողջ վերադարձար պատերազմից, վստահ եղի՛ր, որ քո որդին պիտի ասի քեզ, թէ ինքը ո՛չ մի

զրկանք չի կրել : Ամուսինս էլ այդ նաւի մէջ է : Նրա հետ ծանօթացի՛ր և միասին կուեցէ՛ք : Իսկ ես կաղօթեմ երկուսիդ համար էլ, ձեր բոլոր ընկերների համար : Թո՛ղ Աստուած ձեզ յետ դարձնի :

Նաւը հեռանում է արագաշարժ : կնոջ վերջին բառերը գուցէ չեն էլ լսւում, բայց նա դեռ շարունակում է շատ բան ասել :

— Հուրըրա՛, գոռում են յանկարծ նաւի ճանապարհորդները :

— Հուրըրա՛, պատասխանում են նաւամատոյցի վրայ գտնուողները :

Եւ բոլորը կամաց կամաց հեռանում են նաւամատոյցից : Ով որ իր վիշտն ունի, արդէն ընկղմած է նրա մէջ : Ով որ վիշտ չունի, գնում է իր հանգստութիւնը վայելելու :

Բոլորը, բոլորը մոռանում են այն կնոջ, որ իր չորս երեխաների վրայ աւելացնում էր և՛ մի որբ երեխայի, թէ և ինքը այնքան էլ չունէր իր չորսին տալու : Աչքերս արտասուքով լեցւեցին :

Երկար հուրըրաների ձայների հետ իմ ականջից չէր հեռանում նաև նոյն կնոջ ձայնը :

Նա մի հերոս էր :

Բոլորը մոռացան նաև ծովը, իր սիրած տղամարդուն տանող նաւի անխնորհ տակ ընկած կնոջ, որի ուռած դիակը տարաւ ոստիկանութիւնը :

Երկար իմ հայեացքի առաջից չէր հեռանում նաև այդ ուռած դիակը, ինչպէս չէին հեռանում այդ օրը իմ բոլոր տեսածները :

Արդեօք սա էլ մի հերոս էր :

Անցնում էի փողոցով : Քաղաքային այգու մօտ էի : Գեղեցիկ օր էր : Օդն մեղմ ու թարմ : Աշնանային հաճելի ջերմութիւնը աւելի էր տրամադրում մարդկանց :

Փողոցում անցուդարձ չկար : Ես էի և մի մարդ ու կին : Զգիտեմ այդ մարդն ու կինը ամուսիններ էին, թէ քոյր եղբայր : Երկուսն էլ առոյգ էին, ուժեղ, թէ և ո՛չ բարձրահասակ կամ գէր : Նրանք գնում էին իմ առաջով իրար ամուր կպած, բայց ո՛չ թեւանցուկ :

Վստահ, որ իրանց լեզուն ո՛չ ոք չի հասկանում իրենց համար օտար մի երկ-

րում, ուր եկել էին հաց աշխատելու համար, նրանք չէին քաշոււմ, չէին փափրսոււմ, այլ խօսում էին այնպիսի մի ձայնով, որ ես էլ էի լսում :

Կինը ասում էր տղամարդուն .

Արդեօք ճանապարհ պիտի ձարենք հայրենիք հասնելու համար :

Նրա ձայնը դողաց, թէ և նա փորձում էր իրան ամուր պահել :

— Դեռ պահատանը ասացին ինձ, ճանապարհ կայ մինչև Ֆինլանդիա, իսկ այնտեղից հեռու մեզ ճանապարհ ցոյց կը տան մեր հիւպատոսները :

Տղամարդու ձայնն էլ դողաց, թէ և նա էլ փորձում էր ամուր պահել իրան :

Տիրեց լռութիւն : Նրանք իրար ամուր սեղմած առաջ անցան : Նրանք նայում էին իրենց առաջը : Չէին յանգնում նոյն իսկ իրար նայել :

— Ինչպէ՞ս պիտի անցնենք Շւէտիայից դէպի մեր հայրենիքը, հարցրեց կինը կրկին ձայնը դողալով :

— Ինձ ասացին, որ Հիւսիսային Մովում մեր դաշնակիցները թագաւորում են, հետեւաբար և՛ մենք կանցնենք նրանց նաւատորմի զաշտպանութեան տակ :

Տղամարդու ձայնն էլ դողաց :

Նրանք մի քանի քայլ էլ անձայն առաջ գնացին :

— Այսօր նոյն ծովում տիրապետում են մեր դաշնակիցները, բայց մինչև Դրիստիան հանելներս կարող են մի թրշնամինքը տէր դառնալ նոյն ծովին, ասաց կինը, որի ձայնը դարձեալ դողաց :

— Այդ դէպքում կը մնանք Նորվիգիայում, պատասխանեց տղամարդը :

Մի քանի քայլ էլ նրանք լուռ ու անձայն առաջ գնացին միտ գլուխները կախ առանց իրար երես նայելու : Նրանք աւելի ու աւելի ամուր էին սեղմում իրար :

— Իսկ եթէ մենք ծովի վրայ լինե՞նք թշնամու տիրապետութեան ժամանակ, հարցրեց կինը դարձեալ ջանալով իր յուզումը զսպել :

Տղամարդը կանգնեց, բռնեց նրա թեր : Նա էլ կանգնեց : Տղամարդը նայեց նրա երեսին ու ասաց .

— Միթէ՞ դու վախենում ես թշնամուց : Եթէ նա մեզ պատահի ծովի վրայ, կը մեռնենք : Բայց միթէ՞ միևնոյնն չէ մեզ համար, թէ ո՛ւր կը մեռնենք :

Կինը ժպտել փորձեց և վրայ բերաւ հազիւ լսելի ձայնով :

— Ես մահից չեմ վախենում, մահաւանդ երբ գիտեմ, որ ես ու դու միասին պիտի մեռնենք : Ինձ մտառանջութիւն է պատճառում այն, որ մենք օտար ծովում կը խեղդենք, երբ դեռ դու կարելիութիւն չես ունեցել մի գնդակ իսկ արձակելու թշնամու վրայ :

Կինը նայեց տղամարդուն, որ ամուր սեղմեց նրա ձեռքը : Եւ երկուսով առաջ անցան :

Ես հետեւեցի նրանց, բայց երկար նըրանք որեւէ բան չասացին :

Զօրա՛ւաւաքի օրերին դեռ շատ բաներ տեսայ : Գեղեցիկ, հոյակապ, Սրտաճմրկ ու ճնշող : Նրանց մասին կը պատմեմ իմ ընթերցողներին մեր երկրորդ անգամ իրար պատահելու ժամանակ :

Էնզելի

ՀԱՒԱՏԱՑ, ԵՒ ՏԵՍԱԻ

Քաղցր եւ նուիրական յիշատակին խրիւնեան Հայրիկի, Հայրիկի խաղաղութիւն, որուն յիշատակը հոգեւորապէս մնացած էր : Եւ իմաստուն հետաքրքրութիւն մը դէպի ամեն բան : Զայն չըջապատողները վրան կը դողային, և ժողովուրդը իրանու թիւն կուտար անոր ծնողացը, որոնք կեանք տուած էին այդ շնորհալի էակին : Այսպէս, տակաւ մեծցաւ փոքրիկ Մկրտիչը : Անոր մէջ գոյութիւն ունեցող բնատուր բարձր կարողութիւններն ալ սկսան

Գրեց՝ Ս. Մ. ԾՈՌԵԿԵԱՆ

ածիլ ու զօրանալ: Ու անիկա զգաց, որ իր վրայ պարտք դրուած է լոյս սփռելու այն մութ միջավայրին մէջ, ուր ինքն ալ կ'ազդէր: Ուստի, իրիմեան նուիրուեցաւ գիտելիաց ուսման, և հոգեւոր կրթութեանը: Իր արտակարգ ջանքերով ու անխնայ ինքնախառնութեամբ, չափ առաջ գնաց, և քիչ ժամանակուան մէջ, հասաւ մտաւորական զարգացման բարձրագոյն աստիճանի մը: Ու գործունէութեան ասպարէզ մտաւ: Անոր երկնաչուէչ, ցնցող, գիտակցութիւն սերմանող խօսքերը արդիւնաւորեցան ժողովրդին մէջ: Դժբախտութիւնն ունեցաւ յաւիտեան կորսնցնելու իր կինն ու զաւակը: Այն ատեն, վարդապետ դարձաւ, և ծննդավայրէն դուրս ելլելով, գնաց երկրին ամեն կողմի հայ բնակչութեան ընդհանուր վիճակը քննելու: Շատ տեղեր մտաւոր լուսոյ վառարաններու հիմը դրաւ: Վարագը փայլեցուց, Ս. կարապետը պայծառացուց, Անոր լուսաւոր գաղափարներու հոսանքը հայրենեաց ամեն կողմը տարածուեցաւ, և արտասահմանեան երկրներու մէջ ապրող հայութեան վրայ ալ ազդեցութիւն գործեց: Սակայն իրիմեան, իր կատարած այս լուսաւոր, բարի գործերուն համար, սկսաւ հալածուիլ: Ունեցաւ ամեն տեսակ թշնամիներ: Անոնցմէ ոմանք որոգայթ լաւեցին, որպէս զի անոր անձին հետ մարեն նաև զիրենք անհանգստացնող լոյսը: Մինչդեռ ան, միշտ ճակատաբաց, գնաց պաշտպանելու տարածած գաղափարները, իր ոսկերեքին մէջ դարձող քաղցր, ճարտար ու բանաստեղծական լեզուով: Միևնոյն ժամանակ, իր ոսկիներուն ինք բարի կամեցաւ, ու բարիք բրաւ: Բայց միայն իր անձն ու գաղափարները պաշտպանելով չի հանգստացաւ իրիմեան: Անիկա, արդէն շատ վշտացած էր, տեսնելով որ դարերէ ի վեր հարստահարող իր ցեղին անտանելի վիճակը հետզհետէ աւելի կը ծանրանայ: Եւ որովհետեւ, այդ դժբախտ ցեղը պաշտպան մը չունէր, ինքն իրիմեան ինքն ստանձնեց այդ գերը: Ու իր բողոքի ձայնը բարձրացուց, և հայ կեանքի, պատուի ու ինչքի ապահովութեան անհրաժեշտ պահանջը դրաւ մէջ տեղ: Միևնոյն կողմէն զինքը, կրօնականութեան աստիճաններէն բարձրացնելով, Պոլսոյ Պատրիարքութեան աթոռը նստեցու-

ցին: Այն ժամանակ, իրիմեան Պատրիարք, իր մեծ պահանջը աւելի զօրաւոր ձայնով մը հնչեցուց: Դռնացում չստացաւ: Թողուց Պատրիարքութիւնը, և քանի մը հայրենասէր ընկերներով, գնաց Եւրոպա: Ու այնտեղ, ընկերներուն հետ, քրիստոնեայ մեծ պետութեանց առջև պարզելով իր բաղաձայնար ազդիւն կացութիւնը, օգնութիւն խնդրեց: Պետութիւնները միայն չոր խոստումներ ըրին, և գործնական քայլ մը չառին: Ասոր վրայ մահու չափ տրամեցաւ ան, և դառնացած սրտով հեծեց:

— Բայց ո՞ր դիմեմ, և որմէ՞ սպասեմ անմիջական օգնութիւն խեղճ ազգիս համար: Երջանկութեան մէջ ապրող մարդիկ ո՞րքան անտարբեր են տառապող թշուառներու նկատմամբ...

Իրիմեան, դէպի իր որդեգրած ժողովուրդը ունեցած վշտակցութեան և անձնուիրութեան մէջ այնքան յառաջ գնաց, որ բարձրագոյն գնահատման արժանացաւ, ու կոչուեցաւ Հայրիկ:

* *

Հայրիկ կոչուեցաւ անիկա ամենէն, և անոր այդ անուանումը հետզհետէ աւելի նուիրագործուեցաւ: Ժողովուրդը, ինչնեղութիւն ու կարիք որ ունենար, կը դիմէր իր Հայրիկին: Անոր ներկայութիւնն ու օգնութիւնը, կը փնտռուէր ամեն կողմ: Այնպէս որ Հայրիկ օր մը վասպուրական, օր մը Տարօն, ու ուրիշ օր մը կիրիկի կը գտնուէր: Անգամ մըն ալ անիկա կ'երթար Պոլիս, Կովկաս, Արարատեան աշխարհ, Էջմիածին, և ապա դարձեալ կը դառնար մայր երկիր: Հայրիկ ուր որ կանչուէր, հոն էր: Հայրիկ ամեն տեղ էր: Իբրեւ թէ արդէն գոյութիւն ունեցող չարիքները բաւական չլլային, օր մըն ալ սով տիրեց վասպուրական: Եւ անա Հայրիկ հովուական ցուպը ձեռքը, երեսց վանի փողոցներուն մէջ: Անոր գրպանները լեցուն էին դրամով, որուն աղբիւրը կը հոսէր առատօրէն, գալով երկրին այլ և այլ կողմերէն ու արտասահմաններէն: Հայրիկի դիմումին առջև, բաց էր ամեն ձեռք ու գրամարկը: Անոր անձը վստահութեան կատարեալ մարմնացումը, և անունը մարդասիրութեան ճշմարիտ նշանաբանը:

— Հայրիկ, անօթի ենք, հաց տուր մեզի, կը գոչէին փողոցները թափառող բաղամթիւ խեղճեր, և կը շրջապատէին զայն:

Հաց աղաղակողները միայն հայեր չէին, այլ նաև թուրքեր, քրիստոնեւորներ, իրենց ամեն հասակի ու սեռի ներկայացուցիչներով:

— Հայրիկ, կ'աղերսէին օտարազգի սովեալները, մենք ալ քու զաւակներդ ենք: Մեր ալ սիրելի Հայրիկն ես դուն: Գթա՛ մեզի ալ, և հաց տուր, որ անօթի չմեռնինք:

Ու Հայրիկ, անխտիր սիրոյ ու կարեկցութեան հայեացք մը ձգելով ամենուն վրայ, կ'ըսէր անոնց.

— Այո, դուք ամենքդ ալ իմ զաւակներս էք, և Հայրիկ ձեզ բոլորդ հաւասարապէս կը սիրէ: Բայց Հայրիկ ձեզ կը պատուի, որ դուք ալ, իբրեւ եղբայրներ, մէկլմէկ սիրէք:

Ապա, իր գրպաններէն հացազնով լեցուն բուռերը հանելով, արդար ու կանոնաւոր բաշխում մը կը կատարէր:

— Հիմա գնացէ՛ք խաղաղութեամբ, կ'աւելցնէր ան, զանոնք գոհացնելէ ետք: Սակայն, մի՛ մոռնաք փառք տալ Աստուծոյ, և օրհնել ո՛չ թէ բաշխող, այլ նպաստատու ձեռքերը:

Հայրիկ, փողոցներուն մէջ, իր գլխով լեցուն պտոյտը լրացնելէն վերջ, քայլերը կ'ուղղէր դէպի տունները: Կային շատ ընտանիքներ, որ կ'աւանային փողոցները իշխալ, ի խնդիր հացի: Կային հիւանդներ, որ չէին կրնար շարժիլ իրենց տեղէն: Հայրիկին երևումը, անսովոր կենդանութիւն մը յառաջ կը բերէր թշուառութեամբ շիջած այդ բոյներուն մէջ: Ազգազուն մանկիկներ, երիտասարդներ, կանայք ու մարդիկ, սուրբ անձ մը պաշտելու ջերմեանով լեցած, անոր սքեմին քղանցքները կը համբուրէին: Հայրիկ կ'օրհնէր զանոնք: Ապա կը մօտենար գետինը քուրջներու մէջ պլլուած հիւանդներու, ու անկար ծերերու, որոնց մեռելատիպ դէմքերը ցոյց կուտային վերկենդանութեան ժախ մը: Անոնք այնպիսի արտայայտութիւն մը կ'ունենային, որ իբր թէ իրենցմէ հեռացած է այլևս ամեն ցաւ ու հեծութիւն: Ցաւերու ու նեղութիւններու փարատիչ Հայրիկը, կը խաչակնքէր

զանոնք, պահպանիչ մը կ'ըսէր և լաւագոյն օրերու յոյս ու հաւատք կը ներշնչէր անոնց: Ի վերջոյ գրպանը մնացած դրամներն ալ այն տեղ բաժնելով, կը հեռանար: Ահա այսպէս, ուր որ մտնէր Հայրիկ, հոն կը թողուր անպատում հանգըստութեան անջնջելի տպաւորութիւն մը: Ուրկէ որ անցնէր, իր հետք, իր ետեւ կը ձգէր գերագոյն մխիթարութեան յորդառատ հոսանք մը: Հայրիկի երևոյթը, ամենուն առջև, երկնային խաղաղութեան լուսափայլ ճառագայթ մը:

* *

Լուսափայլ ճառագայթներ կրող խաղաղութեան այդ ճշմարիտ առաքելը օր մըն ալ կաշկանդուեցաւ: Անպարփակելին պարփակեցաւ յանկարծ, կառավարական հրամանով մը: Անոր համար որոշուած վայրը, Պոլսոյ հեռաւոր ու մենաւոր մէկ թաղին անկիւնը: Ու այնտեղ, եկեղեցւոյ մը շրջապատին մէջ, բանտարկեալի պէս, հսկողութեան ենթակայ եղաւ: Անոր հոգին, անմխիթար տառապեցաւ, վասն զի չէր կրնար իրեն սպասող ժողովուրդին մէջը նետել: Ալ անկարելի դարձած էր ընդարձակ դաշտի վրայ գործելը: Հնարաւորութիւն չկար այլևս, կատարուած անօրէնութեանց դէմ իր բողոքի ձայնը բարձրացնելու: Իրաւ է, թէ շատ վաղած էր ազդիւն անդին, շատ յոգնած ու տքնած էր ազգին ցաւերուն դարձան փնտռելու համար, և թէև այդ ջանքերը ապարդիւն եղած էին, բայց, այնու ամենայնիւ, անիկա պարտասած ու յուսահատած չէր: Նոյն իօկ, իր այդ ջլատիչ վիճակին մէջ, նոր ու զօրեղ ոյժ մը կը ըզգար, և կ'ուզէր իր ստանձնած առաքելութիւնը լրիւ կատարել: Բայց տեսնելով գործելու բացարձակ անկարելիութիւնը, խոհեմութիւն համարեցաւ լուռ ու մուռջ սպասել ազատ օրուան: Իր ամբողջ ժամանակը յատկացուց գրելու, հայրենական վշտերն ու յիշատակները պատկերացնող երկասիրութիւններ պատրաստելու: Մեր պիտի ազատուէր. չէր գիտէր: Տարիներ տեւեց այդ արգելափակ կեանքը: Ու աւելի ցաւալին այն եղաւ, որ իր արգելարանէն ելլելէ ետքն ալ, անիկա ազատ չունչ չի քաշեց: Չի կրցաւ իր արժուի թեւերը դարձնել դէպի Հայաստան: Հայ Իսրայէլի

անսփոփ զաւակները. գերութեան անապատին մէջ ի դուր սպասեցին իրենց Մովսէսի վերադարձին. Հայրիկ քուեցաւ հակառակ բռնահոսանքէ մը, և ինկաւ Սիօնի ստորոտները: Այս անգամ ալ, անոր բնակավայրը, Սաղէմի Հայոց տիրալի ու ձանձրալի վանքը: Ու Հայրիկ, Երուսաղէմ, իր աքսորատեղւոյն մէջ, աւելի դժուարաւար ճգնումի մը ենթարկուեցաւ: Հոգեկան տանջանքներու խաչը, աւելի ծանր զգաց իր վրայ: Այս արգելական ղրութիւնը, նախորդէն աւելի խիստ, ճշն շող ու բռնական էր: Հայրենական ամեն կապակցութենէ ու հաղորդակցութենէ կտրուած, չէզոքացուած էր:

— Աւա՛ղ, կը հառաչէր անիկա յաճախ իր սրտի խորէն կսկծաքին, որ ալ բանի մը չեմ ծառայեր, այլևս չեմ կրնար սիրելի ազգիս հանդէպ ունեցած պարտականութիւնս կատարել: Վա՛յ իմ այս անպէտ գոյութեանս:

Աւելի շատ կ'աղօթէր, ու արտասուազին կը պաղատէր Աստուծոյ.

— Տէր, ազատէ՛ զիս այս անիմաստ կեանքէն: Դարձուր զիս իմ ժողովուրդիս գիրկը: Տէր, մի՛ թողուր որ այս աքսորանքիս մէջ մեռնիմ, առանց ողջունելու հայրենիքիս փրկութիւնը:

Ու եղաւ, որ բարի ժամ մը հնչեց, և Հայրիկ խցիկէն ներս մտաւ վեղարաւոր մը, ժպտը դէմքին վրայ փայլուն:

— Աչքդ լո՛յս, Հայրիկ աւետեց ան: Ազգը քեզ ընտրեց Ամենայն Հայոց կաթողիկոս:

Հայրիկ, զգացած յանկարծական մեծ յուզումէն լացաւ: Պահ մը լուռ մնաց: Ապա, մրմնջեց յուշիկ.

— Բերած լուրդ բարի է. չնորհակալ եմ քեզմէ: Սակայն, տարիներէ ի վեր անգործ մնացող Հայրիկը ի՞նչ արժէք ունի, որ ազգը զայն կաթողիկոս կ'ընտրէ:

— Ատկէ լաւագոյն երախտագիտական արտայայտանք մը չէր կրնար քեզ ընծայել ժողովուրդը: Դուք անոր համար շատ աշխատեցար ու տառապեցար:

— Ատկէ աւելի ծանր խաչ մը չէի կրնար երեւակայել: Արդեօք Հայրիկ կրնայ Հայրապետական պաշտօնը կատարել, ինչպէս որ հարկ է...:

— Հայրիկի մէջ երբէք չի պակսիր գործելու ոյժը: Անիկա պիտի կարենայ իր

բարձրագոյն պաշտօնը օգտակար ընծայել:

— Երկնառաք բաժակ մըն է մատուցուածը: Պարտիմ խմել զայն:

Եւ խմեց անիկա այդ շողողուն երեւոյթով, բայց այնքան դառնահամ բաժակը: Հայոց Հայրիկ, Հայոց Հայրապետ եղաւ: Անիկա ժողովուրդէն աւելի ևս փառաւորուեցաւ, և պաշտումի գազաթնակէն ալ անցնելով, հասաւ աստուածացման բարձունքները: Եւրոպական մեծ ազգերէն ալ, մեծ մարդ ճանչուեցաւ: Շատ երեւելի անձինք, զայն աշխարհի ամենաբաշտիկ մարդը համարեցին, ու անոր երանութիւն տուին: Եւ սակայն Հայրիկ, իր փառքի ամենաբարձր ոլորտներուն մէջ, զինքը միթաւորող բան մը չի գտաւ: Անիկա, իր անփառասէր ու խոնարհամիտ բրնաւորութեամբ, աւելի նեղուեցաւ ու տխրեցաւ, և ինքզինք անաշուքնէ աւելի դժբաղդ զգաց: Զեռքն ունէր իշխանութիւն մը, որ անուանական էր: Ազատ չէր: Իր փառքները իրագործել անկարող էր: Ժողովուրդը միշտ նոյն վիճակին մէջ կը հեծէր, իսկ ինքը չէր կրնար գէթ ամենափոքր չափով մը մեղմացնել անոր տառապանքը: Ասկէ զատ ուրիշ մաշանք մը: Այդ անիշխան-իշխանութիւնը զայն տեսակ մը գերի ու ստրուկ դարձնել կ'ուզէր...: Ի՞նչպէս կը տենչար, որ փոխանակ կախումնաւոր Հովուապետի մը, ըլլար անկախ, պարզ հովիւ մը: Այդ աննշխատ պաշտօնը, գուցէ իրեն թոյլ տար աւելի օգտակար հանգիստնալ: Բիւր անգամ կը նախընտրէր մնալ անօթի, ծաբաւ, մերկ ու անօթեան, միայն թէ ազատ քալէր ու գործէր: Բայց գիտէր, թէ ցնորք մըն էր այդ: Տեղէն չարժիւն անկարելի: Այս մտածումը գիշեր ցորեկ կը կրծէր ու կը հատցնէր անոր վեհ սիրտը: Ու իր կենսապառ այս մաշանքներուն մէջ, գրեթէ միայնակ էր: Զայն անշահախնդրօրէն իրողները քիչ էին: Շուրջը գտնուող մտերիմ բարեկամներու թիւը խիստ սահմանափակ էր: Աւելի շատ էին անոր վստահութիւնը գեղծողները, բարութիւնը չարաչար գործածողները: Գտնուեցան նոյն-իսկ անկէ բարեբարուած անխիղճ ապեւրախներ, որոնք ջանացին զայն վարկաբեկել ու վատահամբաւել: Անոնք, մաք-

րամաքուր Հայրիկին վրայ ցելս նետեցին: Ուղեցին մրտաւել, սեցնել երկնային գոհարը: Ոգի ի բռին աշխատեցան զայն նեղկայացնել ապիկար, կասկածելի, վնասակար: Բայց Հայրիկ, ինչպէս միշտ, դարձեալ անսահման ներողամտութեամբ մը, բարձրէն նայեցաւ այդ փոքրոգի հակառակորդներուն վրայ, և անոնց սէր ու բարութիւնը քարոզեց: Լսող չեղաւ: Վերաբարութիւն քարոզեց: Լսող չեղաւ: Վերջապէս, Հայրիկ, ամեն կերպով այնքան նեղուեցաւ ու ճնշուեցաւ, որ Երուսաղէմի աքսորական կեանքին երանութիւն մի աքսորական կեանքին երանութիւն լուռաւ: Բայց յանկարծ օր մը, սե օր մը, անիկա մոռցաւ այդ բոլորը: Ահաբեկեցաւ, և կայծակնահարի ցնցում մը կրեց: Հայաստան աշխարհը, Հայ արեամբ ողողուած, ու աւերուած էր: Կոտորածէն ու քանդումներէն ետքն ալ, երկրը սկսած էր ամայանալ: Գաղթականութեան հազարածաւալ յորձանք մը յառաջ նետուած էր դէպի արտասահմանեան ամեն երկիր: Եւ բերաւորներ կ'երթային էջմիածին, Հայրիկը տեսնելու ու անկէ սփոփանք գտնելու:

— Հայրի՛կ, կը հեկեկային այդ երիցս թշուառ արարածները, մեր սիրելիները ջարդեցին, ունեցածնիս կողոպտեցին, տուն տեղ այրեցին, և մենք, կեանքերնիս ազատելու հաճար, փախանք: Հայրի՛կ, մենք մեր կոկիծէն ու յուսահատութենէն կը մեռնինք: Դուք պաշտպանէ ու միթաւորէ մեզ:

Հայրիկ, գոթով ու արցունքով լեցուն աչքերը կը դարձնէ անոնց վրայ, և կերկրաձայն կ'ըսէ.

— Եկէ՛ք, եկէ՛ք, իմ դժբախտ զաւակներս, ու հանգչեցէ՛ք Հայրիկի թեւերու հովանիին տակ: Իրաւ է թէ անօրէնը անպատիժ մնալով, շատ յառաջ գնաց, բայց անիկա օր մը պիտի պատժուի երկնաւորէն: Ու դուք, անշուշտ, հայրենիք պիտի վերադառնաք, և պիտի ապրիք ազատ ու հանգիստ: Ես այդ մասին յոյս ու հաւատք ունիմ: Դուք, ուրիմ, յոյսով եղէք, ու հաւատքով մնացէք:

Յոյսով եղան, և հաւատքով ապրեցան Հայրիկն ալ, ու հէք տարագրեալներն ալ, որ անօրէնը պիտի պատժուի, և Հայ ժողովուրդը օր ու արեւ պիտի տեսնէ: Զուր

յոյս, ընդունայն հաւատք: Սե բախտ Հայաստանի դժնդակ կացութիւնը միշտ նոյնը մնաց: Մինչ այս, մինչ այն, Հայրիկ այլևս ծերացած, մաշտեցնեմ տկարացած, հետզհետէ աւելի ընկճուեցաւ: Բայց անիկա, ընկճուելու գաղափարին հետ երբէք չի հաշտուեցաւ: Ու հայրենեաց փրկութեան յոյսի կայծը, դողալով ու գուրգուրանքով պահպանեց իր մէջ: Այդ հեւացող կանթեղին չիջումը, անոր մահը պիտի ըլլար: Աչքերը յաւիտենապէս չի փակած, կ'ուզէր տեսնել ազգին ազատութեան արեւը: Շատ անգամներ, վեհաբանէն առանձնակի Մայր Տաճար իջած, և Սուրբ Միաձին իջման Տեղի սեղանին առջեւ ծնրաղիւր ժամերով մնացած, և կողկողագին հայցած էր Տիրոջմէն, որ իջնէ ու այցելէ իր անօգնական փոքրիկ հօտին: Հայրիկ, աղօթելէ զատ ուրիշ բան մը չէր կրնար ընել: Միայն ու միայն աղօթելու ազատութիւնը ունէր: Գիտէր ու երազ խոյս տուած էին անկէ: Գիշերը ու ժամանակ, կամ առաւօտեան կողմ, վեհաբանին բակէն անցնողները կը տեսնէին, որ Հայրիկի սենեակին լոյսը կը վառի: Ու ընդհանուր խոր լուռութեան մէջ, կը լսէին մեղմ ձայն մը: Հայրիկ կ'երգէր: Անոր երգը Դաւթի սաղմոսները, ու Երեմիայի ողբերը: Եւ սակայն, Հայ աշխարհին մէջ նոր փոթորիկներ բարձրացան, նոր չարիքներ ու թշուառութիւններ յառաջ եկան: Հայաստան երկրի արձաւիրքը դեռ չանհետացած, Ռուսիոյ Հայոց կրած հալածանքները սաստկացան, և անոնց ազգային կալուածները գրաւուեցան կառավարութեանէն: Այս հարուածը ուղղուած էր Հայ մտքին, Հայ լուսաւորութեան ու Հայ յառաջդիմութեան: Հայ ազգային ինքնուրոյն գոյութիւնը կը խորտակուէր այդ երկրին մէջ, բանի որ անոր պահպանման միջոցները կը խլուէին: Մերունի բոլոր միջոցները կը խլուէին: Մերունի Հայրիկը, սակայն, այս հարուածէն ինքզինք չի կորսնցուց: Մտածեց կատարուած մեծ անիրաւութեան դէմ կանգնել, փոխանակ լռելեայն համակերպելու: Այդպէս ալ ըրաւ: Բողոք, ողորձ միջոցներ, սրտայոյզ դիմադրաւորումներ: Զօրաւորը, այդ տկար ճիգն ու ճիշդ ծաղրեց ու մարեց: Այն ատեն Հայրիկ, դարձեալ դիմեց Աստուծոյ, և անկէ խնդրեց.

— Տէր, դո՛ւն պաշտպանէ տկարներ:

բոլոր իրաւունքը այս անիրաւ զօրաւորին գէտ: Յոյց տուր քու երկնային իրաւաւորութիւնդ, և Աստուածային արդար դատաստանդ:

Ու արդար դատաստանը չուշացաւ: Երկնաւորին մատը չարժեցաւ: Անիրաւ մեծ աշխարհակալը սարսող դաս մը առաւ իրմէ շատ պզտիկ մրցակցէ մը, և աւելս պասելի պարտութիւն մը ու ամօթալի անկում մը կրեց... Ասոր վրայ, գրաւուած կալուածները վերադարձուեցան, և Ռուսիոյ Հայութիւնը վերականգնեցաւ: Այլ սակայն, այդ ուրախութիւնը շատ կարճ տևեց: Այս անգամ կովկասի թուրքերը, աստանայաճէն դրդուած... ոտքի ելան, ու զինուած յարձակեցան Հայոց վրայ: Ընդամենը է, թէ Հայերը ինքզինքնին պաշտպանեցին, և ետ մղեցին աստանայաճէն կոյր գործիքը դարձող ազէտ ու մոլեռանդ թշնամին, այնու ամենայնիւ, անփոխարինելի բազում կորուստներ ունեցան: Իսկ Հայրիկ, Հայ արեան վերահասու մը տեսնելով, նոր անաւոր ցնցում մը կրեց, որուն թողած ծանր ազդեցութիւնը անդամանելի եղաւ: Վերջապէս, կովկասահայերը իրենց գլխուն պատահած աղէտէն ետք, ինքզինքնին գտան տակաւ: Բայց Հայաստանի Հայերուն անբերելի վիճակը չի մեղմացաւ: Անոնց ահու սարսափի ուրուականը չի չքացաւ: Չանոնք արիւնքաւոր ընող անօրէն բռնապետը իր պատիժը չի կրեց: Եւ Հայրիկի այս անդարձան մնացած մեծ ցաւն ու սոսկալի հիւժումը աւելի սուր ընթացք մը առին: Անոր ընական ուժերու վերջին մնացորդներն ալ, արագօրէն սպառեցան: Պարթև հոգիին պարթև հասակը կորացաւ, մարմինը հալեցաւ, բարակցաւ ու պզտկացաւ: Հուսկ ապա, անիկա ինկաւ անկողին: Ու օր մըն ալ, Հայրիկի վիճակը այնքան ծանրացաւ, որ անոր վախճանը շատ մօտալուտ թուեցաւ:

Վախճանը մօտալուտ ըլլալը, Հայրիկին քնն ալ զգաց: Ու մեծ երկիւղով պաշարուեցաւ: Զինք վախցնողը սակայն մահը չէր: Իր փիլիսոփայական միտքը, մահուան վրայ մտք գաղափար չունէր: Պատճառը այլ էր բոլորովին: Բովանդակ կեանքին մէջ տաժած իր միակ սեւեռուն իղձը,

Հայաստանի ժողովուրդին բարօրութիւնը իրականացած չէր: Սհա թէ ինչու կը տաքնապէր Հայրիկ:

— Ո՛հ, պիտի չմեռնիմ, մտածեց անիկա խորին հաւատքով, մինչև որ ճաշակեմ մեծ երջանկութիւնը:

Ու Հայրիկ, իր հոգեկան այդ բուռն ճգնաճեղքներու միջոցին, այլևս չի կրցաւ ուշ դարձնել շուրջը գտնուող մարդոց ունեցած իրարանցումին: Անոնք կ'երթային, կուգային, արտաքոյ կարգի խնամքներ կը շռայլէին այլևս մահամերձ եղող Հայրիկին, և խորհրդաւոր փոփոխութիւններ կ'ընէին: Ամենամեծ հետաքրքրութեամբ մը կը սպասէին Նորին Սուրբ Օծութեան Ամենայն Հայոց Հայրապետին արտասանելիք վերջին խօսքերուն: Կ'ուզէին անոր ընկեր կտակը արձանագրել պաշտօնապէս: Մինչդեռ Հայրիկ, Քրիստոսի պէս աղքատ, լուծայ մը իսկ չունէր: Մէկ ձեռքը լեցուածը միւս ձեռքէն հոսած էր Հայ թշուառութեան ու կարօտութեան աշխարհը: Անիկա կամք մը, ցամ հրաման մըն ալ չունէր: Այդ մարդիկ բնաւ չի խորհեցան, թէ Հայրիկ նոյն միջոցին ինչ մորմորումներով կը հատնէր: Անոնք չըմբռնեցին, թէ Հայրիկ ինքն էր, որ երկրին քէն իր անկալած ու յապաղած կտակի մը կատարմանը ակնդէտ, չէր ուղեր ժառանգազուրկ գոցել աչքերը յաւիտենապէս: Բայց անա, Հայրիկի շնչառութիւնը դժուարացաւ, և անոր ընդհուպ դադրելու անխուսափելի դարձաւ: Հասաւ վերջապէս վայրկեան մը, որ բոլորինը, և զայն չըջապատող միւս անձերը, քաշուեցան մէկ կողմ: Վեհարանի վեհաշուք սրահին մէջ, մահուան հրեշտակին թևածութեան չըջիւնը գողցես լսելի եղաւ: Ընդհանուր հանդիսաւոր լուծիւն մը, ու անվրդով հանդարտութիւն մը տիրեց: Ներկայք, արձանային անշարժութեամբ կանգնած, անքթիթ աչքերով սկսան զիտել Հայրիկի լուսաւոր, ճառագայթարձակ դէմքը, որուն վրայ զարմանահրաշ երևոյթներ կը պատկերանային փոփոխակի: Հայրիկ, թէև հոգեւոր, բայց գիտակցութիւնը կորսնցուցած չէր: Ու անոր աչքին առջև գարձեալ, այս անգամ աւելի սև ու մռայլ գոյներով, նկարուեցան Հայաստանի կործանուած քաղաքները, հիմնայատակ եղած գիւղերն ու ամայացած դաշտերը: Անիկա,

ԿԱՐՄԻՐ ՕՐԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

Գրեց՝ Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

1895 Հոկտեմբերի վերջին եօթնեակին մէջ կը գտնուէին...

Ընտանիքով Զարսնաճագ փոխադրուած եմ և կը վարեմ Բերրիի Հ. Միաց. Ընկերութեանց երկսեռ վարժարաններուն Ա. դաստիարակ պաշտօնը:

Այդ տարին յեղափոխական երկունքի մէջ կը գալարուէր. երկու գործիչներ գաղտնապէս այցելած էին Բերրիի և տեսակցած մեզի հետ. սակայն իրենց թուղթերը բացարձակ վստահութիւն չի ներշնչեցին մեզ և իրենցմէ մէկը յետոյ իմացանք որ խարբերդի ջարդին՝ անդրանիկ ձեռնալը փաթթոյններէն մէկը եղած էր:

Օրեր առաջ, վիճակին առաջնորդը, խորէն վարդ. Շահնազարեան, Մշոյ Ս. կարապետի միաբաններէն, բարի, պարզամիտ վեղարաւոր մը, ուսման նման սենեակս նետուած և հեռագիր մը ձեռքին մէջ, գոռացր էր անեղ ձայնով. «Կարգաւ սա հեռագիրը. եպիսկոպոս պիտի ըլլամ». և զլիարկը վեր նետեց ուրախութենէն խելայեղ: Օրուան պատրիարքին ստորագրութեամբ, գաւառական Առաջնորդներու զրկուած ծանօթ կեղծ հեռագիրն էր, որ Անատոլի բարենորոգումները կ'աւելտէր և կը յանձնարարէր «Եղմիսանի գալպիլէ միւնիսթաղի օլմագ» (սրտի խաղաղութեամբ սպասող ըլլալ) որպէսզի... ոչխարի պէս մորթուէին և ինքնապաշտպանութեան վրայ խորհող չըլլային...

Հակառակ վարդապետին խելացնոր ուրախութեան, որուն հետեանքով մէծիտ մըն ալ պարգև տուած էր հեռագրատանցը ինչին, ես ո՛չ մէկ յուզում չունեցայ և զլուխս շարժելով—չեմ հաւատար—բօի.— ինքնդ ես, աղաղակեց լուսահոգի վարդապետը և պատանիի մը թիթեալարժուութեամբ Առաջնորդարան վազեց քաղաքական ժողովը գումարելով մեծ աւեփաւ հաղորդելու համար:

Եւ իրօք, հազիւ 15 օր անցած, իւշահարի (բարենորոգում) ձայները սկսան գալ չըջականերէն... Բալուրի մէջ արիւնը

անգամ մը ևս լսեց երեսի վրայ մնացած բիւրաւոր որբեայրիներու և որբուկներու աղիողորմ լացերն ու ճիչերը: Ու սրտախորով խորունկ հառաչանք մը քաշեց, և անպատում արտաբերեց մը լեցուած, խորութեամբ: Զեռքերը կսրծքին վրայ ծալեց: Պաղատական ձև մը առաւ: Անոր լոյսաղբիւր աչուներուն ծայրերը արտասուաց կաթիլներ երեցան: Եւ անիկա, անհաջող, գերեկցող աւիւնով, հեղ մըն ալ աղօթեց:

— Տէ՛ր, միթէ իմ թշուառ դաւակներու փրկութեան վայրկեանը տակաւին չի հասաւ: Միթէ այդ հէք անմեղներուն քաշած հերիք չեղաւ: Անոնք այլևս յուսահատ, կորստեան անդունդի եզրը հասած են: Թող ուրեմն զա՛յ արագապէս հու երկնային ողորմութիւնդ, և ազատէ զանոնք: Ես կը սպասեմ, Տէ՛ր, քու Աստուածային գթութեանդ, դեռ վերջին շունչը քեզ չի յանձնած:

Այս աղօթքէն ետք, Հայրիկ, նայուածքն ուղղեց դէպի երկինք. աւետաւոր պատգամի մը ժամանումը ակնկալելով: Եւ իսկապէս, ակնկալուած պատգամը չի յապաղեցաւ: Երկնային յայտնութիւն մը եղաւ: Ու հրաշալի տեսարան մը պարզուեցաւ անոր աչքերուն առջև: Այն տեսն, Հայրիկի պայծառաշող կերպարանքին վրայ, ուրախութեան անանց ժպիտ մը երևան եկաւ: Անիկա վերկենդանութեան շարժում մը ունեցաւ: Դողդանութեան շարժում մը ունեցաւ: Դողդող թևերը բարձրացուց դէպի վեր: Եւ ապա, իր խայտացող հոգւոյն անդուսպ ու անպարագրելի ոգևորութեամբ, հեւաց:

— Ահա՛, երկինքի դռները բացուած են, և ազատարար հրեշտակները կը սաւառնին ամեն կողմ: Մեծ անօրէնը կործանուած է: Հայ աշխարհը դարձեալ չէնցած, ու իմ ժողովուրդս փրկուած է: Փա՛ռք քեզ, երկնաւոր թագաւոր: Հիմա պատրաստ եմ, հոգիս ձեռքդ աւանդելու: Եւ Հայրիկ հոգին աւանդեց: Անիկա,

իր գերագոյն յոյսը պսակող տեսլիքով մը, երջանկացաւ յաւիտենականութեան անցնելու պահուն: Հաւատաց, և տեսաւ: Նիւ եօրփ



ակռաները կափկափելով. բարեբախտաբար պաղարիւնութիւնս երբէք կորսնցուցած չէի և հրացանիս բռնովը հարուած մը տալուս պէս, նկուղին բերանը ծածկող տախտակ, մինչեւ մէկ կողմու ես ալ դուրս ցատկեցի տնտեսին ձեռքէն բռնած. լսեցի քնւտերուն աղմուկը որ մեր տան գոյքերը կը տանին և ոմանք ալ կ'աշխատին մառանին դուռը բանալ. ուղղուեցանք դէպի պատուհան, ուր տեսայ պահուած անկիւն մը մեր ընկերներէն երկուքն ալ. մեր հրահանգին վրայ պատուհանը քիչ մը լայնցուցին և դուրս ելան. մառանին դուռը բացուելու վայրկեանին ես ալ յաջողեցայ այդ ծակէն սողոսկիլ և ինքզինքս գտայ դրացիի մը տանիքին վրայ. գընդակները կը սուրային. զիկզակ վաղքով մը տանիքի վրայէն ջրկիր Յովհաննէսին տունը մտայ որ շատոնց պարպուած էր և խեղճ մարդը նստեր կուլար դառնօրէն. նշմարեցի որ մեր ընտանեկան պարագաներն ալ ամբողջութեամբ կ'ինքրու մեծ բազմութեան մը հետ, հոգ տանիքին վերայ ծածքի մը տակ նստած կ'արտասուեն. վար իջայ դատարկուած ստորնայարկը և ահագին կաւէ փեթակի մը ետին պահուածեցայ. քերտերու կանչերը այլևս չէի լսեր. ժամացոյցը նայեցայ, թրքական 11ի մօտ էր. 8 ժամէ ի վեր յիկառ չէի ծխած. անդիմադրելի ախորժակ մը զգացի և հատ մը սկսեցի ծխել. այդ միջոցին դուռը կամաց մը բացուելով մէկը ներս մտաւ զգուշաւոր քայլերով. առանց իրմէ տեսնուելու, նայեցայ որ դրացիներէս մէկն է ապահովաբար թաքստոց մը կը փնտռէ. զիտմամբ հազացի և երբ տեսայ որ սարսափահար կը փախչի, կանչեցի զինքը. «ապահով է հոգ» ըսաւ, «ի՞նչ գիտնամ».

— Ես ալ քովդ գամ. — եկուր: Սիկարա մը հրամցուցի, որ մերժեց, երկիւղէն ախորժակը փախած էր: Յանկարծ զրան առջև ահագին վիվլուկ մը փրթաւ ու դուռը շառաջիւնով մը բացուեցաւ և ներս խուժեցին երկոտասնեակ մը բարբաբոսներ, սուրերով, հրացաններով և կացիններով զինուած. խորհեցայ թէ տունին դատարկութիւնը տեսնելով առաջ չպիտի գան, ընդհակառակը կարծես կռահած մեր հոգ պահուելը՝ եկան. քայլ մը ես և պիտի տեսնէին մեզ. ապահով էի որ մեծ կտորս ապահով պիտի մնար, մինչև հիմա չեմ կրը-

ցած լուծել այս հանելուկը. ներքին մը-
ղումէ մը հիւքտրացած, ցառկեցի տեղէս
և կուրծքս տնկած, յանդիմանական
չնշտով մը դռնեցի. «պօգ գալաւ պու-
րատա», և անցայ իրենց մէջէն յովորտ
քայլերով ու դուրս ելայ. ետ քաշուեցան
յարգանքով և մնացին պահ մը արձանա-
ցած. ես ուղղակի գացի մեր տունեցիներե-
րուն քով, որոնք զիս կենդանի գտնելով,
կ'ուզէին որ աներևոյթանալու կարողու-
թիւն մը ունենամ, փեթակին քովի ըն-
կերս մերկացուցած և առանց սպաննելու
հեռացած էին քիւրտերը: Իրիկուն կ'ըլլար
և քաղաքը պարպուած էր քիւրտերէն.
անոնք զիրար ալ սպաննեցին աւարին
պատճառաւ: Գացինք մալ միւսիս Ստեփան
էֆ. Արփիարեանի տունը, որ Գայմագամին
տանը քով էր և չէր կողոպտուած. սակայն
այդ ազնիւ և ազգասէր մարդը ինքզինքը
կողոպտեց ունեցածը ու քիչ իրուն տալով:
Այդ գիշերը մեր տունեցիները Տիկին Ար-
փիարեանի հետ հեռագրապետին տունը
գացին և ես ալ վարդապետին հետ, որուն
գլխարկն ալ փախած ատենը գլուխէն ին-
կած էր, պաշ ֆեսթիպիլ հիւրացանք:
Երկրորդ օրը նոր յարձակում մը ևս տուն
քիւրտերը և առջի օրուան տեղը մնացած
աւարի մնացորդներն ալ տարին: Բազմու-
թիւն մը հաւաքուած էր մեր գտնուած
տան դուռը, որոնք կը պահանջէին ներսը
գտնուած հայերս իրենց յանձնել որ սպան-
նեն: Լուր ղրկեցինք Գայմագամին որ
սուինաւոր զօրքով եկաւ և մեզ իր պաշ-
տօնատունը տարաւ: Առաջնորդին կողմէն
Պատրիարքարան իսկ իմ կողմէս Միաց.
Հնկերութեան հեռագիրներ տունք աղէտը
գուժող, որով ապահով ես թէ մինչև այ-
սօր Պոլիս չեն հասած...: Քաղաքիս գրեթէ
բոլոր կարեւոր Հայերը կառ. պաշտօնա-
տունը հաւաքուէր էին: Գիշերը ուշ ատեն
հեռագրատունէն Յրփիարեան էֆ. եկաւ
մեր քով արտասուալից աչքերով հասկցուց
թէ կեանքերն իս վտանգի մէջ է. սակայն
առատեան դէմ հազարապետը եկաւ և ա-
ւետիս տուաւ մեզ՝ պատուիրելով որ բա-
րեգութ Սուլթանին (°°°) կեանքին աղօթք
ընենք, որ հրամայած է աւարառու քիւր-
տերը պատժել և հայերը պաշտպանել:
Վերջէն իմացանք թէ, որոշուած է եղեր
որ երկրորդ օրը քիւրտերու զինեալ բազ-
մութիւն մը կառ. պաշտօնատան վրայ

յարձակի, և գինուորական կեղծ պաշտ-
պանութենէ մը յետոյ, թոյլատրուի սր-
խողխող ընել հոն ապաստանող հարիւրա-
ւոր ու կարեւոր Հայերը : Սուլթանին բա-
րեգթութիւնը ահա այդ որոշումը չվաւե-
րացնելն է եղած, որուն անտեղեակ բերտ
աւատապետները ստուգիւ երրորդ օրը թէ և
եկան պաշտօնատունը պաշարելու և գին-
ուորական ընդդիմութիւնը պահ մը առա-
ջին օրուան պէս կեղծ կարծելով ետ չու-
ղեցին երթալ, բայց մէկ քանիին սատակը
փռուելուն պէս վայրկեանաբար անհետա-
ցան քաղաքէն ու շրջականերէն. և այսպէս
այն գինուորները որ չէին կրցած ամենա-
մեծ մասամբ անգիւն քիւրտերը արգիլելու
որ չթալանեն հայերը, մէկ վայրկեանի
մէջ կրցան վանել յոտից ցզլուխ զինեալ
վոհմակը . . .

Զորքերը օրը արտօնուեցանք մեր դա-
տարկ բնակարանները զառնալու և մեր
սպանուածները թաղելու, որոնք 15 հատի
չափ կային և շարուած կողոպտուած եկե-
ղեցիին գաւիթը և որոնց մէջ էր և պա-
տանի զոհը՝ ծիծաղը դեռ պրկուած չըը-
թունքին վրայ. 5-6 տարու տղեկ մըն ալ
նշմարեցի գիակներուն մէջ... : Թուրքե-
րու տուններէն հողը պեղելու գործիքներ
բերին և դիակները թաղեցին... :

Զորք-հինգ տնուեր մէկ տուն հղած էինք. Գրիստոնէութեան առաջին դարն էր, ո՛չ ոք սեփականութիւն չունէր մեր մէջ. քակուած բարձեռու խոտերէ խոշոր անկողին մը պատրաստեցինք, ուր կը քնանային ինձմէ՛ զատ ամենքը իրարու բով երկնցած, վերմակ ունենալով առաստաղը միայն. ու մանք ալ քրքրած մինտէրներու վրայ. խեղճ հայրենակիցս Պրն. Յովսէփը, մինչև լոյս «վա՛յ, վա՛յ, վա՛յ» ըսելով՝ չոր մին-տէրին վրայ ասդին անդին կը տապալտէր. այդ տանջանքէն ես զերծ մնացի չնորհիւ Երփրարեանին, որ իր երկու անկողիննե-րէն մէկը ինձ զրկած էր:

Աղէտը հասարակաց ըլլալով զաղբու-
ցանք տրտնջելէ. գինիի կարամաները մեծ
մասամբ ինչոյած էին բիւրտները և այն կը
կազմէր գլխաւորապէս այր մարդոց սը-
նունդը: Այդ օրերը ուսուցիչներուն ամ-
սականները տուած է ստացած չէքովս, ո-
րով հացի նեղութիւն չկրեցինք. չմոռնա-
յիչելու որ Միաց. Ընկերութիւնը բոլոր
պատնեաններուն մէջմէկ ամսական նուէր

տուաւ վերջը՝ Կառավարական և միսիո-
նարական նպաստներն ալ սկսան զալ մէկ
կողմէն :

Այս վիճակին մէջ երկու շաբաթ հա-
զիւ անցած էր, երբ առաւօտ ընն ալ յան
կարծ հրացանի պայթումներ իմացանք և
մունկետիկին ձայնը՝ որ կը հրաւիրէր հայե-
րը կամ մեռնիլ, կամ կրօնափոխ ըլլալ։
Նոր իրարանցում և նոր տակնուվրայու-
թիւն դարձեալ. զինեալ թուրքեր սկսան
պտտիլ և մահուան օպառնալիքով կրօնա-
փոխութեան բռնադատել. հաւանողին տան
վրայ դրօշակ մը կը տնկուէր. քանի մը
ընկերներով Գայմազամին գիմեցինք որ
տարտամ պատասխանով մը մեզ չուզեց
ընդունիլ. միացած բողոք. քարոզիչին
Բէթիի հայ միւսնիւն վարդապետին գա-
ցինք, ուր տեսանք փոքրաւորը ճերմակը
փաթթած և իր քով ալ զինեալ ոստիկան
մը. Գերապատիւը չուզեց ընկերանալ մեզի
Գայմազամէն բացատրութիւն պահանջե-
լու և մենք զինքը նախատելով տուներ-
նիս դարձանք սպասելով մեր մահուան։
Յաջորդ առաւօտ տեսանք որ հարիւրաւոր
հայեր ճերմակներ փաթթած մզկիթ կ'ա-
ռաջնորդուին, ուրկէ սակայն շատեր վը-
տարուած էին զինիի տակառ դարձած ըլ-
լայնուն համար... ։

Արփիարեանին և ինձ ալ անուղղակի կերպով իսլամանալու առաջարկներ եկան, զոր մերժեցինք խստորէն և ընդունողներն ալ յանդիմանեցինք և խրատեցինք այդ մահաբոյր օրերուն մէջ. իմանալով սակայն որ երկուքս ալ անդին զրկելու որոշում տրուած է ու կը հետապնդուինք և որովհետեւ մտադիր չէինք տակաւին մկկնելու, ուստի զիշեր մը միասին ճամբայ ելանք երկուքս գաղանապէս և Մ. Ագիզ կրցանք հասնիլ ապահով, ուր հիւրընկալուեցանք Նշան էֆ. Արփիարեանէն:

Բերրի մէջ քեռադատերս ամուսինը՝
հանգուցեալ Կարապետ Անթառամեանն ալ,
որ չատ ճարպիկ մէկն էր, քիւրտի տա-
րազ մտնելով Գիդի գնաց և եղբայրս չվա-
րանեցաւ իր կեանքը վտանգի դնել ու
քանի մը ոստիկաններ ու զինեալ քիւր-
տեր վարձելով Բերրի գալ և մեր ընտա-
նիքը Գիդի փոխադրել։

Իսկ թէ մենք Մ. Աղիզի մէջ ո՛րքան
կեցանք, ի՞նչիք տեսանք և ի՞նչպէս Դղի
վերջացանք յաջողեցանք, ա՛յդ ալ տար-
բեր ողիսական մըն է, զոր կը վերապա-
հենք ուրիշ անգամուայ մը :

Erqñlyu

Գրեց՝ ՍԻՐԱՍԱՐԴ

1895ի սե Թեապետին էր...

Չուլուսի օրեր էին, արցունքի օրեր, արիւնի օրեր...

Ողջ Հայութիւնը՝ բռնապետութեան անշէջ խարոյկին մէջ թաւալելով՝ հոգեւոր քայքային հեքոտ գայարումներու տակ կը սարսռար, կը մահանար՝ որպէս քաւութեան նոխաղ Բռնապետութեան Աստծոյն: Վայրենի թուրք և Գիւրջ խուժանք սովալլուկ գայլերու նման՝ Ալլահին ու Մեծ Մարգարէին օգնութեամբ՝ փառիշտ հին հրամանը կը կատարէր տառացիօրէն, սփռելով ամեն ուրեք արիւն և մահ...

Գետերն ու ձորերը, ծառերն ու դաշտի շուշանը հազարաւոր ընկողներու անապակ արիւնէն խենդեցած՝ բողոքի, ընդվզումի ու վրէժի խրոխտ երգը կը հնչեցնէին վատարար փախչողներու ետեւէն, որուն արձագանքը անհունին մէջէն կուղղւէր մինչև Արդարութեան Աստծոյն և կը սարսռեցնէր անոր ամրապինդ ոսկեղէն դահլը...

Գազանօրէն ծրագրւած համատարած ջարդը Հայաստանը սպանդանոցի վերածեց էր:

Հայութիւնն էր, որ բռնապետութեան տաճարին առջև կը մորթւէր վայրենօրէն...

Ու ազատ զարգացման, արդարութեան և հաւասարութեան դարաւոր թշնամին, Ապտիւլ Համիդը, գահին վրայ կը հրճէր շնականօրէն:

Մ. Թէ և կուսակալանիստ բաղաժմէր, սակայն բռնապետութիւնը դարձեալ անտանելի ըլլալու աստիճան ծանրացած էր Հայութեան գլխին, մասնաւորապէս գիւղերուն՝ որոնք կեդրոնէն բաւական հեռու ըլլալով՝ յաճախ ենթակայ էին վայրենի խուժանի յարձակումներուն: Միջավայրը՝ որուն մէջ կապէր Հայութիւնը՝ լծացած էր ու հայ ժողովուրդին մէջ մեռած էր ազատութեան տենչը, ընդվզումի փրկարար ոգին:

Ստրկութիւնն ու թմրութիւնը ընդ-

հանուր էր և յուսալքող, բայց շուտով զարթնումի ու գիտակցութեան մտրակը շարժեցաւ ցնցելով ամբողջ երիտասարդութիւնը:

Յեղափոխական կայծը բռնկած էր, իսկ ազատութեան տենչը՝ հրահրած...

1890ի Հնչակեան Կարնոյ դէպքը, Գամ-Գաբուի յեղափոխական անգրանիկ ցոյցը կայծակի արագութեամբ եկան ցնցեցին Մ. վիլայէթի երիտասարդութիւնը և անոր աչքերը ուղղեցին խաւարին մէջէն պլպլացող լոյսի ճառագայթները: Հայրենասիրական վսեմ սարսուռը բոլորի սրտերը թունդ հանեց և հայրենիքի փրկութեան երազը՝ հրդեհեց անոնց ամբողջ էութիւնը...

Բանականութիւնը խաւարին մէջէն յատկօրէն նշմարած էր հեռուն, շատ հեռուն ազատութեան արշալոյսի փթթումը:

Ոստում մը, նկատելի ոստում մը կատարւած էր դարաւոր թանձրացած խաւարէն դէպի վաղան նորազարթ առաւօտը...

Մ. Թ. և չըջակայ գիւղերու երիտասարդութիւնը դարաւոր թմրութենէն ըսթափած՝ սկսեց ալեւ աչքերը բանալով դիտել իր շուրջը դարձող իրադարձութիւնները, լսել վերածնունդը աւետող «Հնչակ»ի զիւղի զօղանջները, որ կը հնչեցնէր տառապանքի ու արիւնի արգանդէն ծնող Հնչակեան կուսակցութիւնը:

Ազատարար հրեշտակը, Հնչակեան կուսակցութիւնը, Մ. վիլայէթի վրայ ալ իր թևերը տարածեց էր ու յեղափոխական տենչէն վառւած, գինովցած երիտասարդութիւնը կը սուրբ անոր տակ՝ բռնութեան անուրբ փշրելու և Հայ Ազատագրութեան արձանը կերտելու վսեմ գաղափարէն մտրակւած:

Ունդաւառութիւնն ու ոգևորութիւնը անհնարին էր կապտել շատ սեղմ չըջանի մէջ: Պայմանադրական նախապաշարունակները սկսած էին կամաց-կամաց յօգս ցնդիլ սապոնի պղպշկներու նման:

Փոփոխութիւնը ակնյայտի էր ու վաղան պայքարը հերոսական կը թւէր:

Ս. Գիւղը ըլլալով կեդրոնէն հեռու, չինւած Ա. լերան սրտին վրայ, շատ նըպաստաւոր էր յեղափոխական հաւաքումներու, այդ պատճառաւ Հնչակեաններու բոյնը դարձած էր, բայց, տարաբաղաբար, կառավարութեան աչքէն վրիպած չէր, որը, սակայն, անգիտակ ձեւանալով լուռ էր, կսպասէր յարմար առիթի մը իր ներսը կուտակւած թոյնը ներարկելու անոնց երակներուն մէջ... Ու դժբաղդաբար, չուշացաւ այդ յարմար առիթը, զուլումի և արիւնի օրը...

Համատարած ջարդի, Հայութիւնը իսպառ ջնջւում հրամանը հասաւ նաև Մ. Թ. կուսակալին, Վէլի փաշային, որը անձկութեամբ կսպասէր իր հաւատարմութեան կրկնակի ապացոյցները տալու իր վարպետին:

Արիւնի հոտը սկսած էր բուրել ամեն ուրեք...

Աւերումի ու ջարդի նախանշանը շուտով արեւցեալ փաթթեցաւ որոններու կողմէ մզկիթներէն Մուհամմէդի հաւատացեալներուն:

Ետեւանը սկսաւ շարժիլ...

Հայ արիւնը կը հոսէր գետի նման, բաղամարդ գիւղերը կը կործանէին, Հայութիւնը կը տքնէր, կը հեծեծէր, բայց ոչ ոք չէր տեսներ արեան գետերը, ոչ ոք չէր լսեր մահաւան ճիրաններուն ոչ ոք չէր լսեր մահաւան ճիրաններուն մէջ գալարուող Հայութեան հեքոտ շնչառութիւնը...

Մ. Թ. չըջակայ գիւղերը մոխրակոյտի վերածուելու ու բնակչութեանը մեծ մասը անխնայ կոտորուելու էին, որովհետեւ վերահաս վտանգին անտեղեակ՝ չէին կարողահաս փախչիլ լեռներու ծորպերուն, խորունկ ձորերուն մէջ ապաստան գտնելու: Երիտասարդներէն շատերը նոյն իսկ նապաստակի նման լքեց խոյս տուել էին իրենց հարազատները, պատիւը, միայն քիչերն էին, յեղափոխական գաղափարէն մոլեգնած, ընդվզումի փոթորիկէն խելաքիտ երիտասարդները միայն հերոսական զիմադրութենէ մը յետոյ ընկած էին ազատութեան երգը իրենց չըթնելուն վրայ գամած...

Ս. Գիւղը պաշարւած էր...

Հնչակեան անձնւէրներու բոյնն էր, որ եկած էին աւերելու, հիմնայատակ կոր-

ծանելու Վէլի փաշային հրամանով:

Հարիւր հազարաւորներէ բաղկացած արշակող խուժանը գիւղին չորս կողմը շրջապատած՝ անընդհատ կրակ կը տեղար Հայ արիւնէն մոլեգնած և Մարգարէին հաւատքովը ընդգրկւած: Բայց ոչ ոք կը յանդգնէր մուտք գործել, որովհետեւ բոլորն ալ համոզւած էին, որ յեղափոխականներու լէզէն մը թաքնւած կայ հոն: Անոնց այս հաւատքը աւելի կը խորունկնար, երբ հրացաններու ձայները յաճախ գիւղի չորս կողմէն կարճազանգէին տասնեակներով գետին տապալելով:

Վէլի փաշան իր ապարանքին մէջ կատաղած էր այդ ճարտարներու հերոսական զիմադրութիւնը և իր ուղարկած նոյն իսկ կանոնաւոր զօրքերու անգործութիւնը տեսնելով անոնց ոյժին առջև: Իրարու ետեւէ սպառնականօրէն արձակած հրամանները կացութիւնը փոխելու բնաւ չէին նպաստեր, հակառակ անոր որ իր ստացած հեռագիրները յաճախ նպաստաւոր էին:

Սակայն Վէլի փաշան շատ լաւ կը հասկնար այդպիսի հեռագիրներու նշանակութիւնը և վստահ գիտէր թէ այդ խալիֆները անպարտելի էին: Ժամերով շարունակ անիկա իր միտքը չարչարած էր, տառապած էր հոգեկան ամբողջ էութիւնով մի այլ միջոց գտնելու, ու վերջապէս յաջողած էր մի ուրիշ հրէշային ծրագիր կերտելու փորձին մէջ...

Արեւ սկսած էր երկրի վրայէն իր փեղերը կամաց-կամաց հաւաքել, թաքնելու իր համար սովորական անդունդին մէջ, որպէս զի ականատես չըլլայ եղբրական տռապին...

Գիւղերը իր թանձրացած խաւարով և լեցուն արհաւիրքով վաղուց հանգչած էր երկրի վրայ: Արիւնածարաւ խուժանին աղաղակը խորհրդաւոր խաղաղ գիշերւան մէջ կարճազանգէր, որոնց կոչու ու կուպիտ ձայներէն և մերթ ընդ մերթ հրացանաձգութիւններէն շուրջ անգամ կը սարսռէին իրենց օրջերուն մէջ:

Ս. Գիւղը արհաւիրաց մթութեան մէջ թաղւած կը սփսփար, իր կեանքի վերջին րոպէները կը համբէր խուլ հեկեկանքով մը: Բարբարոսական վոհմակը տենդագին գործունէութեան մը մէջ թաղ-

մը, թեև տակ ծրար մը դրած՝ ուսէն վար հրացան մը կախած և գօտիին մէջ խրած երկար ու կեռ դաշոյն մը:

Անոնց նալածքները իրարու գամեցան: Ճնշեցան երկուստեք ու պահ մը լռութեան մէջ դիտեցին զիրար, անբացատրելի նալածքներով...

— «Չճանչցա՞ք զիս», խզեց լռութիւնը նորեկը մեղմ և կարեկցական ձայնով մը:

Ու հազիւ թէ անծանօթը խօսքը վերջացուցած էր, Արթին անմիջապէս փաթթեցաւ անոր վզին:

— «Ա՛խ, հրեշտակս, այդ դու ես...»

— «Նուրիցա՞ն», բոլորին ալ չթնեւրէն թռաւ զարմացական ու հիացական արտայայտութեամբ մը:

Տեսարանը նւիրական էր ու հոգեպարար:

Նուրիցան՝ այդ զարգացած ու զաղափարական օրինակելի օրիորդը, իրենց ծանօթ էր, շատ լաւ ծանօթ, որովհետեւ շատ անգամ անկէկա երբ իրենք վտանգի ներքեւ գտնուած էին, գաղտնիօրէն իմաց տրւած և այդպիսով ազատած էր զիրենք ստոյգ մահուէն: Գիտէին նաև, որ Արթին հետ սիրային կապերով կապած էին անբաժանելիօրէն, ու հակառակ շատ մը բամբասանքներու և զրպարտութիւններու անկէկա անվեհերօրէն իր մասնակցութիւնը բերած էր Հնչակեան գաղափարներու տարածման գործին: Անոնք կը սիրէին ու կը յարգէին որպէս քոյր, ու գիտակ կը պահէին բոլոր գործունէութեանց: Անոր ճարպիկութեան և բարեսրտութեան ծանօթ էին, բայց երբէք չէին կարող երեւակայել այդօրինակ յանդուգն քայլ մը, գերմարդկային նւիրում մը:

Անոնք օրիորդի անձնագոհութեան գերագոյն օրինակին առջև հիացած էին, այնպէս որ անոնց գլուխները ինքնաբերաբար վար խոնարհեցան...

Արթին Նուրիցային ձեռքը բռնած մօտեցաւ ընկերներուն, որոնք արտակարգ գուրգուրանքով և խանդաղատանքով սեղմեցին օրիորդին ձեռքը կրկին և կրկին:

— «Դուք ի՞նչպէս և ո՞ր տեղէն կառողացած ողջ այս տեղ հասնի, օրի՜որդ, ըսաւ Նշան եղբայրական ջերմ համբոյր մը դրոշմելով անոր փափուկ ձեռքին վրայ:

— «Առ այժմ չեմ կարող այդ հարցին պատասխանել, որովհետեւ վայրկեանը թանգ

է, ըսաւ օրիորդը, Բայց դուք ինձ այն ըսէք, թէ ինչ կար ասոնց մէջ, ցոյց տալով գետինը ընկած գաւաթները:

Բոլոր ընկերները անգամ մը գետինը նայեցան և անգամ մ'ալ իրարու, սակայն ո՛չ մէկը պատասխանելու պատասխանատուութիւնը յանձն առնելու ղեկեց: Նուրիցան կռահեց, որ իր այդ հարցումով նեղ կացութեան մատնեց զանոնք, և արդէն ժամանակ ալ չկար երկար սպասելու վաճառի հրդեհի նախանշանը տալու պահը հոսած կ'երևէր, ուստի ուղեց խօսքը փոխել, բայց Լեւոնը զինքը կանխեց.

— «Երկու խօսք միայն այս մասին, և կը յուսամ թէ հետաքրքրութիւնդ պիտի գոհացնէ: Դուքսէն ռե է օգնութիւն չհասնելով մեր փամփուշտները սպառնացան բոլորովին: Բայց որպէսզի անխուսափելի հրդեհին ողջ զոհը չի դառնանք, ընտրեցինք թոյնով մահանալ նախ քան հրդեհի սկսիլը...

Լեւոնը խուլ որոտում մը, և անոր յաջորդեց խուժանին ոռնոցը:

Օրիորդը փութով ծրարը բակեց, նախ տուփով փամփուշտները հաւասարապէս բաժնեց անոնց մէջ ու յետոյ քրդական լաթերը, որ մասնաւորապէս պատրաստած էր, պատելովով միանգամայն անոնց որ շտապէն փոխել տարագին:

Արդէն հինգ վայրկեան չանցած բոլորն ալ կազմ ու պատրաստ կ'ապսէին ծպտւած անձանակի ըլլալու աստիճան:

Մեկնումի պահը հասած էր...

Օրիորդը կուրծքի տակէն դուրս բերաւ մետաքսահիւս խոշոր թաշկինակներ ման կտոր մը, զգուշութեամբ բացաւ, համբուրեց զայն ու երկարեց ամենէն տարեցին, Լեւոնին:

Սրտազեղ հիացումի բացագոհութիւն մը դուրս թռաւ բոլորի չրթներէն ու զըլուխները՝ զինուորական կարգապահութեամբ՝ խոնարհեցան զէպի նւիրական դրօշը, որուն ճակատը գրւած էր «Ս. Դ. Հ. Կ.» գրերը, իսկ երկու կողմը՝ «Մահ կամ Ազատութիւն»:

Պահը խորհրդաւոր էր ու լռութիւնը՝ հոգեզմայլ:

Օրիորդը թէև յուզւած էր, բայց դարձեալ քաջութիւն և եռանդ ներշնչող ձայնով մը խօսեցաւ.

— «Հնչակեան Յեղափոխական կու-

սակցութիւնը խորհրդանշող այս դրօշը, որ իմ ձեռքովս հիւսած եմ, ամենայնարժար պահը կը նկատեմ նւիրելու ձեզ, Հնչակեան քաջարի զինուորներուդ, որ Հայ ժողովուրդի ազատագրութեան համար պայքարելու ուխտը ըրած էք անոր ծախքերուն տակ: Այս դրօշը թո՛ղ ձեր սրտերուն մէջ վառ պահէ հազարաւոր անպատուած քոյրերու արդար վրէժի դգացումները և հայրենիքի փրկութեան խեղճը: Այս դրօշը թո՛ղ ձեր առաջնորդն ու բաշտութիւն ներշնչող ազգայն ըլլայ, որպէսզի իրականացնէք Հնչակեան գաղափարը իրականացնելու վերջ պիտի գտնեն անարգարութիւնը, կեղծիքը, բրդնութիւնը և շահագործումը: Ուրիշ թո՛ղ յաւատաւորի Հնչակեան կուսակցութիւնը, որ Հայ ժողովուրդի աչքերը ուղղեց խաւարի մէջէն հեռուն պլլալացող ազատութեան արշալոյսը»:

— «Կեցցէ՛ Հնչակեան կուսակցութիւնը», արձագանգեց խրճիթի սև առկ տակ:

Լեւոն երկիւղածութեամբ և գուրգուրանքով զայն ընդունելով նախ համբուրեց օրիորդին ձեռքը և յետոյ՝ դրօշը: Անոր օրինակին հետեցան միւսները կարգաւ և Լեւոն խօսեցաւ բոլորին կողմէ:

— «Պաշտելի օրի՜որդ, երանի թէ կարողանայի բոլորիս սրտերուն հարազատ թարգմանը հանդիսանալ այս խորհրդաւոր պահուն, բայց ցաւ ի սիրտ կրսեմ, որ այդ անկարելի է ինձ համար, միայն այսքանը կարող եմ ըսել, որ դուք այսօր ազատաբար հրեշտակի դերին մէջն էք իսկապէս... Զեր այս յիշատակը յաւատ անշնչելի պիտի մնայ մեր կեանքին և Հնչակեան հերոսական գործունէութեանց պատմութեան մէջ: Այո՛, իրական սեռը թո՛ղ հպարտ զգայ Ձեզմով, որ Հայ ժողովուրդի ազատագրութեան գործին մէջ իր մասնակցութիւնը կը բերէ Ձեր անորակելի անձնւորութեամբ: Դարձեալ կուխտեմք Ձեր և այս նւիրական Դրօշին ներկայութեամբ, որ մեր կեանքը չպիտի խնայենք հայրենիքի համար: Պատիւ իրական սեռին և պարծանք Հնչակեան կուսակցութեան...»:

Օրիորդը զգածաւ սրտով շնորհակալութիւն յայտնեց և զանոնք առաջնորդեց խրճիթէն դուրս: Զգուշութեամբ մի քանի փողոցներէ անցան ու կանգ առին

փլվկած պատի մը առջև:

Մոլեկան ամբոխի աղաղակը կ'արձագանգէր շատ մօտէն, իսկ հրազեններու որոտը յաճախ կը լսէր գիւղին չորս կողմէն:

Մթնածեղ երկնքի վրայ ո՛չ մէկ աստղ չկար: Արծաթապատ լուսինը, որ շատ անգամ այդպիսի քսմանի ռճիւրներու տակաւ եղած ու քար անտարրերութեամբ դիտելով անցած էր, այդ օր սակայն չէր համարձակել ամպերուն տակէն դուրս գալ վկայ չըլլալու բարբարոսական գործողութեան մը:

Օրիորդը ծոցեցաւ վար, պատին տակի տափակ քարը շատ հեշտութեամբ մէկ կողմ ըրաւ ու դառնալով՝

— «Այս գետնափորը մեզ ապահով կը տանի մինչև Լ. Զորը, համարձակութեամբ հետեցէք ինձ, ըսաւ ու քայլերը ներս նետեց անվեհեր: Միւսները կարգաւ հետեցան անոր նկուղին մէջ.....

Հրդեհի ազդանշանը տրեցաւ ամբոխին.....

Արեգակը քունէն նոր արթնցող մատաղ կոյսի մը հանգոյն նազանքով կը բարձրանար հորիզոնին վրայ հանդարտիկ, բոլորովին անգիտակ զիջելւան մէջ կատարւած տոմարին:

Ս. Գիւղը ամբողջութեամբ մոխրի վերածւեր էր քանի մը ժամաւայ մէջ:

Մինչ խառնիճաղանձ բազմութիւնը իր սխրագործութեան յաղթանակը կը տօնէր սխրեւորէն, անդին, Լ. Զորի մէջ, Հնչակեան սեր անձնւորները, ազատ երկնքի տակ, յաջորդ օրւան գործունէութեան ծրագիրը կը կերտէին...



Ի ԶՈՒՐ

Գրեց՝ Ա. ՇԱՄԱԿԵԱՆ

Ի զու՛ր կը փնտնես դու մի անկեղծ սիրտ,
 Սիրտ մը որ կեղծիք ազատ լինէր,
 Սրբազան սիրոյ կրակով վառուած
 Եւ ճշմարտութեան դրոշմը կրէր:
 Ուր սին եսական հաշիւներէ վեր
 Ու շահանդուքեան կապակներէն զերծ
 Ցաւիդ ցաւակից, շոգիդ մասնակից
 Եւ ուրախութեան բաժնեկից լինէր:
 Ի զու՛ր կը փնտնես հանգստեան մի տեղ,
 Մի տեղ ուր կեանքը չէ դարձեր չարիք
 Ուր հացի համար, դրամի համար
 Չխեղդեր մարդը իրեն նմանը:
 Բայց ի՞նչ հայեացք ուղղի՞ դէպ հեռուն
 Ա՛հ քառասունհինգ տարեկան իմ սիրտ,
 Գոյ խոր հայեացք ուղղի՞ դէպ հեռուն,
 Դեպի յայտնով յի վաղորդայն,
 Աշխարհն այս խեղճ եւ կեանք ունայն
 Գոյ արդարեւսանիւն արժան եմ միայն:
 Դարձու՛ր հայեացք ա՛հ փրաւոր իմ սիրտ
 Դեպի շուսափայլ վառ հորիզոնին,
 Ուր ապագայի, շաւաղոյն կեանքի
 Լուսնոյն պսակներ կ'երեւնայ անա՛:
 Երբ քնես սկսեալս անկողնի պատերով
 Չի շինիր բաժան մեր այս աշխարհը,
 Անկողն ցանկերն ու աշխատակը
 Դեպի կասաբեռնութիւն կը տանին մարդը:
 Դարձու՛ր հայեացք, ա՛հ փրաւոր իմ սիրտ
 Դեպի բոցափայլ վառ հորիզոնին,
 Ուր ապագայի, երազած կեանքի
 Անկողն արեւը կը ծագի անա՛:
 Թորոյ

ՊԱՅՔԱՐԻ ԶԱՄԱՐԷՆ

Գրեց՝ Ա. ԿԻՆԼԵԱՆ

Գիշերը յառաջացած էր: Սրբան ժխոր
 Եր ներսած էր սեւ մթնոլորտէ մէջ, միայն
 մերթնդ մերթ հեռաւոր շողեկողքին նը-
 ւազկոտ սուրճին հետ, երբեմն ալ քաղա-
 քի ժամացոյցին հնչոցը կը հասնէր Տրդա-
 տի ականջին:
 Ի զու՛ր տեղը նա կը շրջատէր գրքին
 թերթերը, կը փորձէր, կուզէր կարգաւ...
 Բայց գիրքը կիսնար ձեռքէն:

Միտքը կեդրոնացած էր սրբան թեր-
 թին բերող գուժական լուրին վրայ:

«Հայերը անխնայօրէն կը ջարդեն
 Հայաստանի մէջ, ոչինչ կարող է դապել
 թուրք խուժանին կատաղութիւնը:» Ա-
 հաւաստիկ այն շանթահարիչ բոթը, որուն
 ահարկու թափին տակ անոր ուշը տարւած
 էր դէպի արեւելքի կարմիր հորիզոն-
 ները:

Ցաւին աղէխարչ պատկերը՝ մորմոքը
 դրած էր մատաղ սրտին. կսկիծը՝ պահ մը
 գութի ու գութին ալ վրէժի հուրը վառած
 էր անոր էութեան մէջ: Վրէժի զգա-
 ցումին անձնատուր՝ երակներէն ըմբոստու-
 թեան բամբակ կը փոթորկէր:

Ընդվզումի գաղափարներն էին որ
 թափ կռնէին իր մէջ: Այլեւս նա չէր
 նստած, արագօրէն կը կտրէր սենեակին
 երկայնքը հապճեպ, միօրինակ քայլերով:

Դասադրերը մեկդի նետած, սրբան
 թերթերը ամուր մը սեղմած էր իր մա-
 տերուն մէջ:

Տրդատ քանիցս կարգացած է կրկնած
 էր նոյն արիւնտ պարբերութիւնը ու
 հառաչած էր:

— Հայերը կը ջարդուին... ցեղակից-
 ներս են անոնք որ կը մորթուին ու ես
 դեռ կը դանդաղիմ համալսարանական
 կեանքը ապրի, ո՛չ, կարելի չէ անտարբեր
 մնալ, պէտք է հո՛ն... հոն երթալ ապրիլ
 ու մեռնիլ ցեղիս կարմիր օրերը: Այս ե-
 ղած էր իր վերջին անդրդուի օրոշումը:

Միւս օրն իսկ պիտի մեկնէր առանց
 իր դպրոցին ու մտերիներուն լուր տա-
 լու:

Նա թէ էլ յեղափոխական գործունէու-
 թեանց չէր մասնակցած, բայց ծանօթ էր
 անոնցմէ ոմանց, ու բաւական հետաքր-
 քրած էր անոնցմով:

Յաջորդ օրը իրիկւայ ատեն Փարիզի
 կայարանին մէջ քսանը եօթը գարուններ
 բոլորած, կայտառ երիտասարդ մը ճակա-
 տէն համբոյր մը կատանար տարէց ու աշ-
 խոյժ մէկէ մը, որ եկած էր մինչեւ հոն
 անոր բարի երթ մաղթելու:

Երիտասարդը ուսանողն էր, որ շատ
 մը պաղատանքներով դիմած էր իրեն ծա-
 նօթ յեղափոխական գործիչին, անկէ վկա-
 յական մը առնելու որ անցնի կովկաս:
 Իսկ տարէցը յեղափոխական մ'էր, որուն
 աչքերուն մէջ կը կարդացէր ինքնանիւ-

րումի ու վրէժի բոցը: Նա նախ զգուշու-
 թեամբ, բայց յետոյ շատ ուրախութեամբ
 ընդունած էր ազգասէր ուսանողին ա-
 ռաջարկը:

Շոգեկառքը մեկնած էր արդէն, Տրդ-
 դատ սեղմած էր ուժգին իր տարէց ընկե-
 րոջ ձեռքը ու արտասուքի քանի մը կա-
 թիւներ սահած էին անոր այտերէն:

— Ազգիդ արժանի զաւակը, երթաս
 բարեա՛ւ... տառապող, ջարդուող հայերու
 կսկիծը ու անոնց վրէժը թող բեզ ուժեղ-
 ցնեն: Գնա՛... հո՛ն... տարյուսոյ մի նշոյլ
 թշուառ մնացողներու ու լքածներու: Այս
 եղած էր յեղափոխականին վերջին խօս-
 քերը անոր:

Ամբողջ գիշեր մը և ցորեկ մը սահած
 էր: Մղոններ կը կտրէին արագաթռիչ
 շողեմքներային վազքին առջեւ, տափակ
 դաշտերու յաջորդած էին անդնդախոր
 վիհեր, որոնց երկայնքէն ձգւած կամուրջ-
 ներէն սահելով մտած էին լեռան կուրծ-
 քէն բացւած գետնուղիներու մէջ, ու
 այսպէս կրկնումներ շարունակ:

Վայրկեանները ժամեր՝ ու ժամերը օրեր
 թւեցան հայ երիտասարդին: Նա մինակ
 էր հոն... մինակ իր ցաւերով ու յուզում-
 ներով: մինակ իր խորհուրդներով ու ցե-
 ղին արիւնտ հեռանկարներով: Իր քովը,
 մօտիկը, ու քիչ մը անդին քահանայ
 ճամբորդներու խօսքերէն ոչինչ ուզած
 էր լսել, կորած միջոցէն ու քաղաքան
 տեսարաններէն ոչինչ ուզած էր տեսնել:
 Այո՛, կը լսէր թէ և ձայնէր մը, մարդու
 ձայնէր, որոնք վանկ մը, շեշտ մը չունէին
 իր հայրենիքին վիշտը պատմող: Անոնք
 կը խնդային և երբեմն ալ լրջօրէն կը
 խօսէին քաղաքական, ընկերական ու
 բազմազան նիւթերու շուրջ, բայց եւ ոչ
 մին խօսք մը արտասանեց արեւելքի ջար-
 դերուն վրայ, Հայ տառապանքին վրայ:
 Անոնց յաճախակի խնդուքն ու զարճու-
 թիւնը իր էութիւնը կը քամէին ու աչքե-
 րը կը մթաղնէին:

Ու այդպէս ժամերը սահած էին: Չայ-
 ները պահ մը կանգ առած էին, ու ճամ-
 բորդներու խօսքերէն տեղի տւած էր
 գիշերաւն բունին: Տրդատի աչքերը չէին
 փակուեր, նա արթուն էր, կը հսկէր, կը
 դիտէր ու պալաքար կը մղէր իր կրակոտ
 գանկին մէջ ելեւէջող արիւնաներկ տեսլա-

պատկերին հետ: Կը տեսնէր հո՛ն, Հայաս-
 տանը խաչածեղ լեռնաշղթաները, հո՛ն
 էին այդ սարերը իրենց բարձրաբերձ ու
 անտարբեր դիրքերով, հո՛ն էին անոնց
 կողերէն բխող Եփրատն ու Տիգրիսը, Սի-
 հանն ու ձիւնանը, որոնց մաքուր ու յըս-
 տակ ջուրերը հեռագնեւէ կը կարմրէին, կը
 շիկանային: Գահավէժ հոսանքներոյ մէջ
 դիակներ կը ծփային ու կը տարւէին զսր-
 նընելու սուր ապառաժի մը կամ թաղ-
 ւելու անոնց մոլթ բացւած քներուն մէջ...
 Եւ տակաւին այդ դիակնակոյտերը կանգ
 չէին առներ սահելէ...

Կուգան անոնք հաշմանդամ, անկեր-
 պարան...

Ահա՛ երիտասարդի մը մարմինը, որ
 կը հեռայ տակաւին, անոր վերեր կը քշի
 աղջիկ մը. որուն մերկ մարմինն հետ կը
 ծփայ երկայն սեւ մազերը... Կուգան
 այսպէս, ծփացող ալիքներու խաղալիք
 ու վերջապէս կերթան... կերթան...
 ու գետը ամենի՛ կուլ կուտայ, կը ստնի
 դէպի հարաւ, դէպի արեւմուտք, ու աւելն
 ուղղութեամբ:

Գետերէն անդին, անոր եզերքներուն
 վրայ, սարերու կուշտերուն շուրջ, տա-
 փարակ դաշտերու վերեր սեւ մուխ թան-
 ձր սիւներ կը դիզուին կը բարձրանան:
 Անոնք չեն բղիթ մէկ տեղէ մը, հաղա-
 բաւորներ են, որոնք մէկը միւսէն աւելի
 կը թանձրանան ու կը գալարին դէպի վե-
 ր: Կարծես անքնական, անկերպարան
 հրաբուխներու բացւած քներ են, որ կէ
 կը ժայթքեն հուր ու մուր: Հայ քաղաք-
 ներ, հայ դիւղեր ու հայ օճախներ են, որ
 հրդեհի տրած են վայրագ քիւրտերու
 կողմէն, ու այդ աղէխարչ տեսարանը մահ-
 մէտական փառատօնն է որ կը կա՛ ար: Ի
 հայու ստացւածքով, հայու արիւնով:

Պահ մը թանձրախիտ մուխերը կը
 նստրանան... ո՛հ, ի՛նչ սոսկալի տեսա-
 րան... Մարդկային հոգիներ կ'անէանան,
 մարմիններ կը խողխողեն և սուրն է որ
 իր նախնիքը կը գործէ անխնայ, անսեղ
 արարածներու վրայ: Հո՛ս ծերունի մ'է,
 որ պաղատագին կը մորթուի իր ճահիլ
 որդւոյն դիակին վրայ, հո՛ս մայր մ'է, որ
 իր զաւակին՝ ծծկեր մանկան փաթթած՝
 իր զաւակին՝ ծծկեր մանկան փաթթած՝
 մ'է, որ իր պատւոյն հետ կանչնաւայ:
 Ու այս անխնայօրէն զոհող, ջարդող

ժողովուրդը, հարւածներու, մահաւան ճիւղաններու տակ ճիւղ կը բարձրացնէ, օգնութիւն կ'աղաղակէ:

Այդ սեւ մտապատկերին մէջ, տակաւին Տրդատ կը դիտէ, կը տեսնէ ցաւը իրեն ծայրայեղութիւններով ու լսելի կը թւին անոնց հռչակներէն բարձրացող օգնութեան աղաղակը, սրտաբեկ կոչերը: Կոչեր բողոքարկու, նետուած դէպի երկինք, արդարութիւն ու իրաւունք տեսնող աներեւոյթ Աստծուն, որ տակաւին կը համբերէ տեսնել անմեղ ժողովուրդի մը տառապանքը:

Կոչեր արիւնոտ, նետուած քրիստոնեայ Եւրոպային, քաղաքակիրթ ազգերուն, որոնք տակաւին վայրկեան մ'իսկ չեն խռովիր այս անարկու ոճիրին առջեւ, օգնութեան, փրկութեան ձեռք մը կարկառելու:

Ու տակաւին... Կոչեր են անո՞ք յուսահատակ մը ու վրէժապահանջ, ուղղւած իրենց հեռաւոր եղբայրներուն, օգնութիւն խնդրող:

Ու Տրդատ լսած էր այդ կոչը սրբազան, այդ ձայները աղերսարկու: Նա կերթար հո՞ն, այդ լեւածներուն քով, մուսիներու թուլ մածկողին տակ, կրակէ բոցերուն մէջ, քաղելու պայքարի արիւնոտ անբայքին:

Իր ցեղին գոյութիւնն էր որ կը փրճանար, ազգակիցներն էին, որ ընդարձակ ծովո՞ւ երախին մէջ նետուած կը խեղդէին, նա իր ներկայի պարտքը սեպած էր նետելու այդ ալեծովի փրփուրներուն մէջ իր կրցածը ընելու:

Շաբաթէ մը իվեր ուսանողը Թիֆլիզ հասած էր, նա առանց դժւարութեան մը տած էր «Արծիւ» հրոսախմբին մէջ ու շուտով վարժուած յեղափոխական զինուորակրթութեան:

Իր ազնիւ նկարագիրը, անկեղծ ու զոհաբերող ոգին և յանդուգն ու եռանդող բնութիւնը ուշը գրաւած էին իր ընկերներուն ու խմբագրերին: Նա մինակ չէր հիմա, ցորեկայ ծանր ու դժւարին վարժութիւններէն յետոյ, կը քաշէր իր իրկունները իր խմբագրերին հետ խորհրդակցելու, ծրագրելու իրենց արշաւանքին յատակագիծը:

Անոնք իրենց դէմ ունէին ոչ միայն

թուրք բռնապետութիւնը և իր համախիտներն ու քրդական աշխրեթները, այլև Ռուս սահմանազօրն վրայ կողակներու հըսկողութիւնը:

Բայց այդ խոչնդոտներէն պէտք էր քաշէին, անցնէին: Անոնք վելջապէս դրտած էին ուղի մը, ուր սահմանապահ Ռուս և Թուրք զինուորներու թիւը ցանցառ էր և ընտրած էին ատեն մը, երբ պահակ զինուորները կը քաշէին իրենց դիրքերէն ու կը քնանային:

Ծրագիրը յաջողած էր, խուժը ապահով ճեղքած էր Թրքահայաստանի սահմանագիծը: Իրենց գնալով արգելք հանդիսացող պահապան զինուորներ և կամ զիրենք յրտեսող յիւրաքանչեւներն էին:

Հիմա չայրենի հողին վրայ կը գտնւէին անոնք, ուր եկած էին օգնելու իրենց թշուառ ջարդած եղբայրներուն և հայերուն: Կը քաշէին կարմիր ճանապարհէն, ցուցնելու իրենց ազգակիցներուն և ջարդերէն ազատելու միակ ուղին, գնալ ժողովրդի իրենց իրաւունքը, պահելու կենսակը ապահովելուն մէջ է:

Վրէժի ու ընդվզումի այս ափ մը քաջարի խուժը հո՞ն էր, ռազմադաշտին մէջ, իրենց ցեղին մորթուած դիակաւորներուն վրայ, կռուելու անհաւասար ու ժերու դէմ, ցուցնելու թուրք բռնապետութեան թէ՛ անտարբեր չեն այդ ցեղին օտար երկինքներու տակ ապրող արիւնակից զաւակները: Սուրին դէմ սուր պիտի շարժէին ու արիւնին փոխարէն արիւն պիտի պահանջէին:

Ֆէտայի խուժը երկու քաջարի առաջնորդներով, ամիս մը ամբողջ չըջած էին Հայաստանի աւերակ ու անչէն գիւղերը: Քիւրտեր իրենց աւարին ու կողոպուտին վրայ բռնելով սուրի քաշած էին, շատ մը գիւղեր մատալուտ ցարդէ փրկած էին, դիմադրած էին զիրենք պաշարող թուրք զինուորներուն ու պրծած էին անոնց խիտ շղթաներէն:

Անոնք տակաւին չէին յուսահատեր, կը մաքառէին անքուն ու անօթի: Կը շնչէին ու կապրէին հայրենիքի կուրծքին վրայէն սուրացող բռնաշունչ ու մահախոտ քամիին մէջ: Կը տեսնէին աւերակներու անհամար դէպքեր, միացող, քանդող օճախները ու չէին ուզեր բաժանուիլ այդ

վայրերէն ու չէին դադարել շարունակ կռուելէ: Անոնք ա՛յ ու սարսափը դարձած էին քիւրտ աշխրեթներու, ու փրկարարը՝ ապրող ու դեռ չնշող հայ կեանքերուն:

Ձմրան ցուրտն ու ձիւնը վրայ հասնելով՝ դժւարացուց քաջարի մարտիկներուն ապրելակերպը: Անոնք իրենց շարքերէն տառնեակ մը ընկերներ կորսնցուցած կը քաշէին դէպի Պարսկաստանի սահմանագծերը:

Տրդատ՝ իր խմբագրերին հետ կառավարողէին զանոնք դէպի արտասահման, ձմեռայ միջոցին նոր ոյժեր կազմակերպելով դարնան վերակենդան Պայքարի ճաւաքակ, իրենց հերոսի քաջարի արշաւանքը:

ՄԱՀԱՄԵՐԶ ՀԱՅ ՊԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Գրեց՝ Վ. ԶՈՒԳԱՍՏԵԱՆ

Գերեզմանիս տեղն՝ ես գիտեմ կուգիմ, Ուր է, ո՞ւր, ըսէ՛ք՝ պանդոխտ ընկերներ... Լսեցի՛ք մեծ ողբն հոգւոյս կարեւոր... Ու կոչը սրտիս թելերուն նստել...:

Միևնդեղ կը մարի կեանքիս արեգակ, Կը խորհիմ ամեն ժամ հայրնային, Սիրելիներս ու հայրենիքս՝ այնքան Յիշատակներով քաղած կուրծքիս ակ...:

Անգաւ մ'ալ զանոնք պիտի չի տեսնէ ես, Մութ է ինձ անոնց ներկան, ապագան. Վիշապ է անհուն, զի անոնց դէմ միայն, Պարսկական եղայ օսար որդւոյ պէս:

Հիւսա որ՝ օսար որդւոյ պէս սպրոդ կեանքի մը վերջ, ես երկնի ակ օսար. Ա՛հ պիտի մեռնիմ, ո՞ւր գերեզմանս յար Պիտ ըլլայ, ըսէ՛ք՝ դեռ չը մտած հող:

Գերեզմանիս տեղն ուր է, շուրջ ըսէ՛ք, Խնդրեմ մ'ուրեմ ես դարիս ընկերներ... Բռնու ողբ մ'ուրեմ մեջն հոգւոյս կարեւոր... Ու կոչ մը սրտիս թելերէն նստել...:

«Գերեզմանոցիս պէս ծննդաւայրիս, «Դիւք մ'ունեցող ո՛հ տեղ մը քաղեցիք. «Մահեա վերջ մարմնիս տառապած ու հեք, «Ուրիկ ճանաչելն ցարեւն անցող զիս...»

«Թե չը կրտսի իմ խնդրանքս այս մեկ, «Ու կուգի որ մահն ըրայ երջանիկ, «Գունե ոսկորներս տարիք հայրենիք, Նախա՛յ հայուն հողին յաւանեցիք...»

Թրոյ

Արեւմտ Ճամբային

ԳԻՆՈՎ ՄՐՄՈՒՆՋՆԵՐ

Զ. . . Ին

Գրեց՝ Լ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Ինչ կարմիր է այս ճանապարհը ո՞վ կին, կարմիր ու անվերջ՝ ինչպէս մեր երկուքին ճակատագիրը...:

Կը յիշես ո՞վ կին, վեց դար առաջ, Մայիս ամսուն, երբ վարդերը սոխակներու երգերովը զինովցած՝ կը փթթէին նազանքով, մենք արհամարհելով ընտելեան ծիծաղը, ուղեցինք իրարու հանդիպիլ դերեզմանոցին մէջ, ուր գացեր էինք լքացած կեանքերու երգները կարգաւ քարերուն վրայ, մեռած սէրերու գաղանթը հասկնալ փոխացած սրտերուն խորը. ու հոն՝ մեռելներու գլխուն վերեւ, հսկող լուսինին առջեւ, սե խաչի մը քով ծնկաչոք՝ նուիրական ուխտն ըրինք միասին քալելու:

Հեռու էր ամբողջ երբ մենք ուխտեցինք. քնած էր դահիճը երբ մեր արցունքի կաթիլներով մեր ուխտն օճեցինք. միայն դիակները մօտիկ ըրին որ երկու դժբախտ հոգիներ իրենց երգերովը երգեն հիւսեցին, միայն դիակները տեսան որ զաւկանար շրթունքներ իրարու միացան. այդ դիակները, այո՛, մօտիկ ըրին, տեսան ամեն ինչ. տեսան ու դողացին, դողացին ու լռեցին, ու այն նուիրական գիշերէն յետոյ վեց դար շարունակ քալեցինք միասին:

Քաղեցին մեր սրունքներու ոյժը, ցամքեցուցին մրմունջը մեր հոգիին, բայց մենք քարերէն աօրնը, ծառերէն հաւաքեցինք, ծովերէն գողցանք, հովերէն ծծեցինք ու քալեցինք աներկիւղ, վստահ գիտնալով թէ վարդագոյն հորիզոնը շատ հեռու էր և մեր կեանքը այնքան չարչաւրանքներէ վերջ՝ ուժասպառ ու կարճ...:

Ես վաղուց ինկած կըլլայի կէս ճամբան, եթէ սե աչքերուդ անոյշ թովանքը չի գար քամի յոգնութիւնը սրունքներուս. այո՛, ես կը մեռնէի յուսահատութենէս՝ եթէ ակամայօրէն ծախած ըլլալով երկնային շրթներուդ համբոյրները չի գային իրարու կապիլ սրտիս տրոփունները, պահպանելու համար տառապանքի՝ այսինքն երջանկութեան կեանքը այս կարմիր ու երկար ճամբուն մէջ:

Իմ սե զիցուհիս...:

ՓՈՔՐԻԿ ՍԱՐԴԻՆԵԱՆ ԹՄԲԿԱՅԱՐԸ

(Հեղ. EDMONDO DE AMICIS)

Թարգմ. ՓՈԼ ԵԼԻՔԻՐԱՆՈՎ

1848 թվին, Յուլիսի 24ին, Գուստո-վայի պատերազմի առաջին օրում, մեր զորաբաժնի հետևակի վաթսու զինվորներին հրամայեց զինք բռնել մի առանձնացած տան մէջ մօտակայ բարձունքում, որտեղ յանկարծակի յարձակման ենթարկեց Աւստրիական երկու զորախումբի կողմից, որոնք ամեն կողմերից յարձակելով՝ հազիւ հազ ժամանակ տւին նրանց պատուարելու տան մէջ, և շտապով պատնեշելով տունը թողին իրանց վիրաւորւածներին և մեռածներին ռազմադաշտում:

Դուռը լաւ կերպով ապահովելուց յետոյ՝ մեր զինվորները շտապեցին դէպի ներքնայարկի, ինչպէս նաեւ վերնայարկի պատուհանները, որտեղից պաշարողների վրայ բաց արին մի մահաբեր կրակ, որոնք կիսաբոլորակ ձևով մօտենալով՝ պատասխանեցին ռեզիսորէն:

Վաթսուն իտալական զինվորները՝ կառավարում էին ստորակարգ օֆիցէրներ և մի բարձրահասակ, լուսկեաց, խոթողադէմ, սպիտակահեր մօրուսով մի հրամանատարի կողմից: Նրանց հետ էր մի փոքրիկ Սարդինեան թմբկահար, մի տղայ՝ որ հազիւ թէ կը լինէր 14 տարեկան, բայց նոյն իսկ 12 տարեկան էլ չէր երևում, որը ունէր թխադէմ ձիթագոյն մորթ ու սև խորթափանց աչքեր, որոնցից կրակ էր ցայտում: Վերնայարկի սենեակների մէկից հրամանատարը զեկաւարում էր պաշտպանութիւնը, որի իւրաքանչիւր հրամանը մի ատրճանակի հարւածի նման էր հնչում, գոյց չտալով իր տիրական դէմքի վրայ ամենափոքր յուզումն անգամ:

Փոքրիկ թմբկահարը գունատ էր, բայց իր ոտքերը պինդ դնելով սեղանի վրայ, ամուր բռնեց պատերը և բարձրացրեց իր գլուխն ու վիզը նայելու պատուհանից դուրս, և ծուխի միջից տեսաւ թէ Աւստրիացիները քայլ առ քայլ առաջանում էին դաշտերի մէջից:

Տունը գտնւում էր մի դժուարեկա-

նելի բլուրի գագաթին, այնպէս որ միայն մի փոքր բարձր պատուհան կար վերնայարկում, որը նայում էր նրա կատարը: Աւստրիացիները այդ կողմից չէին սպասում, և ոչ էլ ուէ մէկը կար բլուրի գագաթին: Կրակը ուղղւած էր ճակատից և երկու կողքերից: Յարձակումը դժուարին էր. գնդակի մի խիստ, կատաղի տարափ կարկուտի նման թափւում էին պատերի վրայ և տանիքի կոտորւածքից ձեղդում էր առաստաղը խորտակելով գերաններն ու տանիքը. լեցնելով օդը ծուխի, փոշիի և կիրի բեկորներով. կոտորւած անոթները, ապակիները, շոռաչում էին իրանց գլուխների վերև, ուստի տեսնելով դէպի պատը մի այնպիսի ուժգին ձայնով, որ մարդու մագերը ցցւում էին: Ժամանակ առ ժամանակ պատուհանում կանգնած զինվորներից մէկն ու մէկը ընկնում էր դէպի ներս, ու քաշւում էր մէկ կողմ. ուրիշներ մէկ սենեակից միւսը երերում էին դադրեցնելով իրանց վէրքերի արեան հոսումը իրանց ձեռքերով: Խոհանոցում ընկել էր մի զինվոր, որ գնդակահարւել էր ճակատից: Թշնամին մօտենում էր: Վերջապէս հրամանատարը սկսեց անհանգստութեան նշաններ ցոյց տալ, որ մինչև այդ ժամանակ չէր արտայայտել, որից յետոյ մի յիսնապետի հետ շտապով թողեց սենեակը: Մի քանի րոպէից յետոյ յիսնապետը հապճեպով վերադառնալով կանչեց թմբկահարին, որ հետևի իրան: Պատանին իր ետևից վազեց սանդուխտներից վեր ու մտաւ մի կործանւած դիտանոց, ուրտեղից նա տեսաւ հրամանատարին, որ իր ձեռքում մատիտն ու թուղթը բռնած՝ յենած էր պատուհանի սեմի վրայ, իսկ յատակում նրա ոտքերի տակ կար մի թուղթ, որ պատկանում էր ջրհորին:

Հրամանատարը ծալեց թուղթը և սեւեռելով իր սառը և գորշ աչքերը պատանու վրայ, — որի առջև բոլոր զինվորները դողում էին — խստիւ կերպով ասաց.

«Թմբկահար»:

Փոքրիկ թմբկահարի ձեռքը իսկոյն գնաց դէպի իր գլխարկը:

Հրամանատարը ասաց.

«Դու քաջ ես»:

Պատանու աչքերը փայլատակեցին:

«Այո՛ հրամանատար», նա պատասխանեց.

«Նայիր այնտեղ ստորոտում, ասաց հրամանատարը, տանելով նրան դէպի պատուհանը — ներքևում, վիլլաթրանգաչի տան մօտ, որտեղ այն սուրհմբերն են նախ: Առ այս թուղթը, պինդ բռնիր այս թուղթը ու պատուհանից քեզ վար իջեցրու. կայծակի նման անցիր բլուրը և խոյանալով դաշտերի միջից, հասիր մեր մարդկանց մօտ և սուր այս թուղթը քեզ հանդիպած առաջին օֆիցէրին: Հանի՛ր գոտիդ ու մատաղդ»:

Թմբկահարը գոտին ու մատաղը հանելուց յետոյ, պահեց թուղթը իր կրծքի գրպանում, ապա յիսնապետը թուղթի մէկ ծայրից բռնելով նետից վար, իսկ հրամանատարը օգնեց տղուն որ ցատկէ պատուհանից, իր քսակը դարձուցած դէպի դաշտերը:

«Զգոյ՛ եղի՛ր», ասաց նա, մեր ջուրի փրկութիւնը կախում ունի քո քաջարտութիւնից և ոտքերից»:

«Վստահեցէ՛ք ինձ, ասաց թմբկահարը, սահելով դէպի վար»:

Եկնելով գնա, երբ որ վար իջնես», կրկին ասաց հրամանատարը ինքն էլ բռնելով թուղթը:

«Երկուդ մի կրէք»:

«Աստուած քեզ արագաշարժութիւն տայ»:

Մի քանի րոպէ յետոյ պատանին ներքևում էր. յիսնապետը թուղթ վեր քաշելով անհետացաւ, այն ինչ հրամանատարը շտապեց փոքրիկ պատուհանը ու տեսաւ թէ՛ թմբկահարը բլուրից սրարշաւում էր դէպի վար:

Այժմ նա լիայոյս էր, որ նա կը խուսափէր տեսնելուց, բայց հինգ կամ վեց անգամ փոքր մթազնած գետնից բարձրացած փոշին երկուդ տւին, որ պատանին Աւստրիացիների կողմից նկատու էր, և որոնք բլրի գագաթից կրակում էին դէպի վար: Այն փոքրիկ մթազնած փոշիները գետնիցն էր, որ գնդակների պատուածքից էր առաջանում: Բայց թմբկահարը շարունակում էր վազել:

Մի քիչ յետոյ հրամանատարը սարսափով բազականչեց, «սպանւեց», բայց հազիւ թէ խօսքը բերանից դուրս էր եկել, երբ տեսաւ, որ փոքրիկ թմբկահարը բարձրացել էր:

«Ա՛հ, նա միայն վար էր ընկել», ասաց նա ու նորից շուռն քաշեց:

Թմբկահարը կրկին սկսեց վազել. բայց նա կաղում էր:

«Նա իր ոտքը ցաւացրել է», ասաց հրամանատարը:

Այստեղ, այնտեղ պատանու շուրջ փոքրիկ ամպամած փոշի էր բարձրանում, բայց միշտ նրանից հեռու տեղից, նա այնքան հեռացել էր, որ այլևս վտանգ չէր սպառնում: Հրամանատարը յաղթութեան մի աղաղակ բարձրացրեց, բայց իր աչքերը դողդողալով հետևում էին նրան, որովհետև, բոլորը մի րոպէի հարց էր.

Եթէ նա չուտով ծանուցագրով չհասնէր զորաբաժնի մօտ, խնդրելու անմիջական օգնութիւն, բոլոր զինվորները պիտի կոտորւէին և կամ ստիպւած անձնատուր լինէին, դառնալով ինքն էլ նրանց հետ պատերազմական կախնաւոր:

Պատանին միաժամանակ շատ արագ էր վազում, յետոյ մի քանի րոպէն անգամ կանգ էր առնում և նորից վազում:

«Թերևս մի գնդակ ձուլեր էր նրա ոտքը», մտածում էր հրամանատարը ու դողալով դիտում էր նրա բոլոր շարժումները. իր յուզման մէջ նա խօսում էր թմբկահարի հետ, որ կարծես նա կարող էր լսել իրան: Իւրաքանչիւր րոպէն իր աչքերով չափում էր պատանու ու սուրհմբերի միջև եղած տարածութիւնը, որոնք փայլում էին ներքև, տափաբակում, ոսկեայ ցորենների դաշտերի մէջից:

Միևնոյն ժամանակ նա ներքևի սենեակներից լսեց «ուլոցի» և գնդակի շոռաչի նը, հրամայող ձայնը, յիսնապետների և օֆիցէրների մոլեգնած աղաղակները, և վիրաւորւածների սուր հեծեծանքները և խորտակւած կահ կարասիների ու փոշիացած ձեփերի աղմուկը:

«Արիւթիւն», քաջութիւն», նա բացականչեց, իր աչքերը չհեռացնելով թմբկահարից. «Դէպի առաջ: Սլացի՛ր: Անէ՛ժք: Նա կանգ առաւ: Ա՛հ, նա նորից վեր կեցաւ, դէպի առաջ»:

Մի օֆիցէր շնչասպառ եկաւ յայտնելու, որ թշնամին առանց կրակը դադրեցնելու մի սպիտակ դրօշակ ծածանելով՝ պահանջում է իրանցից որ անձնատուր լինեն:

«Թող ո՛չ ոք չպատասխանէ», — հրա-

տակցող, աշխոյժ և ապրիլ ուզող սգգե-
րու առջև:

Պատմութեան մէջ յաճախ կը հանդի-
պինք այսպիսի ազգերու, ժողովուրդնե-
րու՝ որոնք շատոնց արդէն կորսուած են
աշխարհի երեսէն ու միայն անոնց անուն-
ներն են մնացած թանգարանի զարդերու
շարքին մէջ:

Պէտք է խոստովանիլ որ, մենք, հայե-
րըս ալ զերծ չենք քննադատութենէ թէ՛
հին դարերու և թէ՛ նոյն իսկ մեր օրե-
րուն՝ ցոյց տւած դատապարտելի ընթացք-
նուս նկատմամբ: Եղած են վայրկեաններ՝
որոնք Հայութեան դուռը բաղեւծ ինչոր
կեանքի նոր արշալոյսն աւետելու, սակայն
անտարբեր ու թմրած մեր ուղղութիւնը
պատճառ դարձած է որ բարոյապէս, մը-
տաւորապէս ինկած և քաղաքակրթութեան
բացարձակապէս անյարմար ազգի մը -
թիւրքին - ճիւղներուն մէջ գերի մը
նանք:

Դեռ երէկ էր, 1890-1896 թւական-
ները, որոնք Հայ յեղ. պատմութեան մէջ
ամենափառաւոր տեղը գրաւած են շնոր-
հիւ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան
բուռն ջանքերուն և հերոսական գործու-
նէութեան, բոլորովին տարբեր վիճակ մը
պիտի ստեղծէին հայ ժողովրդի համար՝
եթէ այդ կուսակցութիւնը միայնակ չմնար
ազատութեան համար մղած իր կռիւնե-
րուն մէջ. հայ ժողովրդի սուար սեծա-
մասնութիւնը չուզէր տեսնել, գիտնալ,
չօչափել ընդհանրու արմէքը՝ և թողուց
որ պարտութեան մօտեցած թուրքը իր
դիւային մտածումներուն յաղթական մա-
հիկը տնկէ հպարտ Ձէյթունի հպարտ գա-
ղաթներուն վրայ:

Անցեալը ներկային խրատատուն է,
ու մենք ստիպւած ենք խօսիլ անոր մա-
սին՝ մեր սխալները չվերակրկնելու հա-
մար: Սակայն ի՞նչ կընէ այսօր անցեալի
իր սխալները սրբազրելու համար Ատ-
լանտիանի այս կողմը ապրող հայութեան
սուար զանգաւածը. — ոչինչ, գրեթէ ոչինչ:
Ձուլումի երկրէն փախած, թրքական ար-
հաւիրքներուն կատարելապէս ծանօթ և
պարարտացած գրպանով օր մը հայրենիք
վերադառնալով հանգիստ կեանք վայելե-
լու տենչը իր արտին՝ սա երկտասարդ ու-
ժը ներկայ բաղդորոշ վայրկեաններուն
մէջ չի ցնցւիր, չեռար, բան մը չընէր,

սակայն մեծ փափաքով օրական մի քա-
նի թերթեր գնել, ճաշարաններու ան-
կիւնները և կամ սրճարաններու թոյ-
նալից մթնոլորտին մէջ մելթ Ռուսիոյ
և մերթ Անգլիոյ մրանախան յսկի թեւ
լուրերը պրպտել առանց բառ միւսկ կոր-
սնցնելու և անոնցմով ուրախանալ, հրճ-
ւիլ, զւարճանալ՝ հայրենիքի հանդէպ մեծ
պարտականութիւն կատարած ըլլալ կը սե-
պէ, Ամերիկահայը կրսենք՝ որ թիւս Հայ
ազգին է՛ն բաղդաւոր մասը կը կազմէ այս
պահուս:

Առհասարակ բոլոր հարուստները,
դժբաղդաբար, Ազգային հարցով զբաղու-
լու գերագոյն պարտականութիւններէն բա-
ժին մը չեն ստանձնել, անոնց համար
ազգ, հայրենիք, ազատութիւն և այլն կը
կայանայ միմիայն դրամ գրկելու մէջ, ի՛նչ
որ դրամը առաջին աստուծոն է ներկայ
դարուն համար, ուրեմն ի՞նչ հարկ կայ
հոգ ընելու, տքնելու, զոհելու, սակայն,
եթէ օր մը հայուն ցաւերը վերջ գտնեն, այն
ատեն անոնք հե ի հե պիտի վազեն այն-
աեղ ու պիտի շահագործեն հողադուրկ
դասակարգը, որ իր ուսերուն վրայ շալ-
կեց ազատութեան բեռը: Անոնք, այդ
յաւթանական ժլատները շահերով, կեն-
ցաղով ու մտածելակերպով իսպառ բաժ-
նուած են տանջող ողորմէն, զրկւածներէն,
զոհող դասակարգէն ու պիտի մնան միշտ,
հետեւաբար, անխելքութիւն պիտի ըլլար
անոնց վրայ ոեւէ յոյս գնել, օգնութիւն
սպասել: Երանի՛ թէ գէթ ներկայ պարա-
գաններուն սխալած ըլլալնք անոնց մասին
ունեցած մեր համոզումներուն սէջ, բայց
այն ատեն պէտք էր որ որբացած մանուկ-
ներուն և անօգնական աշխուհներուն սղա-
ղակները խիղճ մը, գոթ մը ստեղծած ըլ-
լային Ամերիկահայ հարուստին սրտին մէջ,
որոնցմով ստիպւէր նիւթական օգնութիւն
փութացնելու իր թշուառ ազգակիցներուն՝
որոնց անհրաժեշտ կարիքը ակնհիւ է:

Այսօր կողկասի մէջ ամեն հայ տուն
հիւանդանոց մըն է, ազատաւէր մեր կով-
կասահայ եղբայրներն ու քոյրերը կարելի
ի գործ կը դնեն այդ հիւանդանոցներուն
մէջ պառկող հայ քաջերը խնամել, առող-
ջացնել ու կրկին արեան դաշտը զրկել:

Հայ ժողովրդի արգար իրաւունքնե-
րուն կայծը թրքական սև մոխիրներուն
տակ թաղւած է, այդ մոխիրը մէկ կողմ

ընելու և կայծը երեւան բերելու համար
է որ մեր պարտաճանաչ մարտիկները ի-
րենց կեանքը զոհաբերութեան բերած են
այսօր: Դէ՛հ, հարուստ էֆէնտիներ, այս
անգամ կարգը ձե՛րն է, ձեր սիրի հեթերով
երեւան եկէ՛ք և անցեալին ձեր գործած
աններելի յանցանքին համար ապաստանե-
ցէ՛ք այսօր զղջման բարձր և ազնիւ հո-
վանոյն ներքև ուղէնք տէ՛ք, հաց տը-
ւէ՛ք, փամփուշտ տէ՛ք կամաւոր հայ
խումբերուն: Ահա այն ատենն էր, որ
ապահոված պիտի ըլլայիք ձեր թողու-
թիւնը, Ազգի մը նկարագիրը պատմական
ծանր րոպէներուն կը չափւի, եթէ Ամե-
րիկայի հարուստը, գէթ այս հազաւակտ
րիկայի հարուստը, օգտւելով՝ կատարէ իր
պատենութեան օգտւելով՝ կատարէ իր
ազգային և մարդկային պարտականու-
թիւնները, այո՛, այն ատեն մենք մեր
թիւնները, այո՛, այն ատեն մենք մեր
խօսքերը ետ կը վերցնենք ներողութիւն
խնդրելով անոնցմէ: Սակայն բազմաթիւ
փաստեր կան, որոնք կապացուցանեն թէ
անոնք այլանդակ պատրւակներ յօրինե-
լով անդրդուելի պիտի մնան իրենց վար-
չելի եսապաշտութեան մէջ:

Ահա այդ է պատճառը որ մենք մեր
աչքերը կը յառենք, մեր խօսքերը կուղ-
ղենք դժբաւոր դասակարգին, հաւատա-
ղենք գործաւոր դասակարգին անգամ կա-
լով որ այս անգամ ու վերջին անգամ կա-
լով որ այս անգամ ըլլայ ըմբռնել և տեսնել թէ
րող պիտի ըլլայ ըմբռնել և տեսնել թէ
անողոք արամարանութեամբ — ճշմարիտ
չըլլալն, այն դասակարգը որուն մարմնոյն
վրայ թշուառութեան նորանոր վերքեր կը
բրբանան ամեն օր և որուն վերքը կը
կոտորայ ցաւին սաստկութեան:

Աւելորդ յղենութիւն է մտածել ասկէ
վերջ թէ՛ չարաչար աշխատանքով վատը-
կած մի քանի աշխուհները հայրենիքի մէջ
մեկ երջանիկ պիտի պահէ, անտարակոյս,
այն մարդ իր բունիկին մէջ և կտուրին
այն հանգիստ կըլլայ, սակայն ի՞նչ կ'ար-
թէ հայրենիք մը՝ երբ անոր տէրն ու տի-
րուիսը թուրք վանտալ կառավարու-
թիւնն է, մինչև չտապալենք այդ նեխած
կազմը, մինչև չի յախ զոհենք անոր ձեռ-
քին միշտադարեան ետթաղանք, մինչև չի
տնկենք ազատութեան յաղթական դրօշա-
կը անոր փշուած ոսկորներուն վրայ՝ չկայ
հանգստութիւն: Ահա այս գիտակցու-
թեամբ է որ ռուսահայ մեր եղբայրները
այսօր շարան շարան մեծ հանոյքով պա-

տերազմի դաշտ կը խոյանան հինգ հարիւր
տարւան հաշիւ մաքրելու թիւրքին հետ:

Նայեցէ՛ք մեր տիտաններուն, ամենքն
ալ մահը արհամարհող և խնդումներս՝ հը-
րածեալի վերջին արարողութիւնը կը կա-
տարեն: Տեսէ՛ք հայ մայրը, չինարի պէս
իր զաւակը կրծքին սեղմած, փոխան լացի
ու կոծի ձեռքը այսօրուան համար ծնած
եմ. զնա՛ պարտքը կատարէ՞ կը դռնայ,
կը պոռայ վիրաւոր վագրի մը պէս: Նայե-
ցէ՛ք գերեզմանին դուռը հասած ծերունի
հօրը, որ հազիւ փայտէ նեցուցին օգնու-
թեամբ կանգնելու կարողութիւնն ունի,
բարկութեան կարտասուէ որ ինքն ալ
ղաւկին հետ չի կրնար տուգանին դէմ
կուելու երթալ: Նայեցէ՛ք, կրսեմ, սա
գեղեցկադէմ հայ հարսնցուկն, որ իր
կեանքի ծաղկաւետման մօտալուտ օրերուն՝
նշանածը կուոյ դաշտը կամաւոր կը զրկէ,
սպառնալով անոր այլևս համբոյր չտալ
եթէ յաղթական դափնին չչահած՝ իր տու-
նը վերագառնայ:

Տեսէ՛ք այս բոլորը և շարունակեցէ՛ք
ձեր մեռելային անտարբերութիւնը եթէ
կրնաք:

Ամերիկահայ գաղթականութիւնը, որ
մօտաւորապէս 100,000 պատկանելի թիւ
մը կը կազմէ, գէթ մօտաւորապէս և նիւ-
թապէս այդ ուժը անպատճառ երեւան
պէտք է բերէ ու միացնէ այն բոլոր ուժե-
րուն հետ՝ որոնք յատկացւած են ու պիտի
յատկացան թրքական աւազակային, խար-
դախ և հայակեր ըէֆէմը տապալելու,
այո՛, Ամերիկահայը հաւաքաբար մէկ մար-
դու պէս պէտք է երեւան գայ և ցոյց տայ
թէ խորունկ կերպով ըմբռնած է պար-
տականութեան հրամայականը:

Ուստ

ԿԱԽԱՂԱՆԻՆ ՏԱԿ

« Զեղոյի եւ իր ընկերներու յիշատակին

Գրեց՝ Վ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

Զոհաբերութի սրբազան պահուն հսկ
երբ դուք, ո՛վ անմահ դիւցաղներ, հա-
սաք կախաղանի անարգ սիւնին տակ,
զինուորներով շրջապատւած և շղթաներով
ծանրաբեռնւած՝ ձեր հպարտ նայւածքնե-
րով արհամարհել գիտցաք բռնակալ կռա-
վարութեան դժոխային գործիքը, որ ձեր

Թանկագին կեանքի վերջին թելը պիտի կտրէր...

Դուք ալեւս լազիստանի ձեր այնքան սիրած բարձունքներուն վրայէն չպիտի կարողանայիք արծաթի աչքերով դիտել Հայ ցեղին տառապանքը և չպիտի կարողանալիք ալեւս բռնակալութեան չղթանքը փրշրել Հայուն ազատութիւնը կերտելու:

Դուք տեսաք ձեր աչքերով և ապրեցաք նոյնիսկ Հայուն տառապանքը, ու ընդվզումի փոթորիկէն հալածական, ուխտեցիք անվերջ պայքար մղել բռնութեան դէմ: Ու այդ օրէն բռնակալութեան անարգ պաշտօնեաները սկսեցին հետեւիլ ձեր քայլերուն իրենց վարպետին՝ Մեծ Մարգասպանին հրամանը իրագործելու:

Դուք, ո՛վ անմահ հերոսներ ազատութեան, սարսափը եղաք թուրք բռնակալութեան: Մեծ Բռնապետը սոսկաց իր գոհին վրայ. բանակները խոյս աւին ձեր առջևէն նապաստակներու նման: Յեղափոխականի ձեր դաշոյնը փոքր բռնապետներու ու մանց կուրծքը խրեցաւ երբ անոնք իրենց վաւաչոտ կրքերու յագուրդ տալ կը փորձէին հայ ընտանեկան նւիրական յարկին տակ:

Շատեր իրենց սրտերը բացին ու ձեր ինքսական գործունէութեան անջնջելի դուաքները քանդակեցին. շատեր ձեր ինքսական դիւցազններգութիւնները երգեցին վաղւան սերունդին, որպէսզի նա ալ ձեր քալած արիւնոտ ճամբէն քալէ ազատութիւնը գրկելու համար: Ու դուք, կախաղանի չւանը ձեր վզին, «կեցցէ ազատութիւն, կեցցէ Հնչակեան կուսակցութիւն» ալալակեցիք խորխորէն դեռ ձեր աչքերը յաւէտ չփակած: Ձեզ պաշտօնները այսօր ձեր ուղիէն կը քալեն լեցած լրէժով մեր դարաւոր թշնամիին կուրծքը ըլճօնելու, ձեր իտիալը, հայրենիքի ազատագրութիւնը կերտելու:

Անցան տարիներ, պաշտելի ընկերներ, բռնապետութեան յաջորդեց սահմանադրութիւն մը, սակայն այդ սահմանադրութիւնը նոր բռնապետութիւն մը եղաւ, Հայ ազատագրութիւնը մահացնող: Ձեր իտիալին ու գաղափարին հաւատարիմ ընկերներ պայքար մղեցին անողոք այդ նոր բռնապետութեան դէմ, և այսօր զարձեւալ կռիւ կը մղեն բռնապետութիւնը տապալելու համար:

Հանգիստ ննջեցէք ո՛վ դիւցազուններ, որովհետեւ ձեր ցանած սերմերը ծլեցան ու այսօր կամ վաղը անոնց արդիւնքը պիտի քաղէ Հայ ժողովուրդը:

Փրավիսեկնս

ԿԱՄԱԽՈՐԻ ՄԸ ԵՐԳԸ (*)

Դրեց՝ ՅԱՐ. ՏԷՏԷՆԱՆ

Կովկասահայեր բանակ եւ կազմեր
Հայ ազատութեան դրոշմ եւ պարգև.
Ամերիկայէն կերքանք օգնութեան
Հնչակեան դրոշմի սակ ուխտեր եւնք մեռնիլ:

Թո՛ղ չիլան մեր մայրեր, եւ մեր եղբայրներ,
Հայաստան կը հրճուի իր հերոսներով.
Խոյս պիտի տայ խաւար, փայլի արշալոյս
Ձիւնոր եւնք կերքանք ուխտեր եւնք մեռնիլ:

Բաղեցէք ընկերք ձեռք ձեռքի տալով
Կոյն մեւնք մոլեւնք որպէս խաչ հերոս.
Ջարդեւնք թշնամիին փրկեւնք Հայաստան
Ձիւնոր եւնք կերքանք ուխտեր եւնք մեռնիլ:

Մեռացէք բարեւալ ազնիւ ընկերներ,
Ղրկեցէք մեզի առաւ փառքի ու շնորհ,
Ձեր ազնիւ սրտեր մեռնէ մի բաժնեք
Ձիւնոր եւնք կերքանք ուխտեր եւնք մեռնիլ:

(*) Ս. Դ. Հնչակեան Ամերիկայի կամաւորական խումբի ընկերներէն ընկեր Յարութիւն Տէտէնան գրած և մեզ յանձնած է այս երգը հրատարակելու բաղձանքով: Ընկերով այս իզձը կը կատարենք առանց փոփոխութեան հրատարակելով:

Ծ. Խ.



<< Ազգային գրադարան



NL0382792

71.592

1-0